

6847
6848
6849
6850
6851

9(47.925)

9-42

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. Ս. Տ.-Մ-ԵԱՆԻ ԵՒ Բ. Շ.-ԵԱՆԻ

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԶԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ԺԹ դարում

Կ ա մ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՅԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Գ Ր Ե Ց

ՆՂԻՇԷ ա. Բա. ԳՆՂԱՄԵԱՆՑ

Протоіерей Егишэ Гегамянцъ. Освободительно дви-
женію армянъ въ XIX стол.
Перепеч. изъ журнала „Овись“

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

Բ Ա. Գ Ո Ւ

Էլեկտր.-տպարան Ն. Ա. Երևանցեանի

Электрo-тип. Н. А. Эриванцова, Баку.

1915

6851

323.1(91.542)

9-54

3105 ЯМ 0 5

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. Ս. Տ.-Մ-ԵԱՆԻ ԵՒ Բ. Շ.-ԵԱՆԻ

ՀԱՅԵՐԻ

ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԺԱՐԺՈՒՄՆԵՐԸ

ԺԹ դարում

Կ ա մ

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՑԵՐՈՐԴ ՇՐՋԱՆԸ

Գ Ր Ե Ց

ԵՂԻՇԷ ա. ԲԱԽ. ԳԵՂԱՄԵԱՆՅ

1005
65169

Протоіерей Егишэ Гегамянцъ. Освободительно дви-
женіе армянъ въ XIX стол.
Перепеч. изъ журнала „Овить“

ԳԻՆՆ Է 40 ԿՈՊ.

Բ Ա. Գ. Ո Ւ

Էլեքտր.-տպարան Ն. Ա. Երևանցեանի

Электро-тип. Н. А. Эриванцова, Баку.

1915

29 MAR 2013

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՏՀԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐԱԼ ԿԱԶՄԻ

ՀԱՅԵՐԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐՓՈՒՄՆԵՐԸ ԺԹ. ԴԱՐՈՒՄ

(Հայկական հարցի վեցերորդ շրջանը)

Ա.

Հայկական հարցի վեցերորդ շրջանը, սկսած է այն բողոքագրով, որ Բեռլինի վեհաժողովի որոշումից դժգոհ մնալով՝ հայ պատերազմական, արձանագրութիւններն ստորագրելուց երկու ժամ անց, —տեղեկութիւնները, —բացի թիւրք լիազօրներէն, —սկսած է այսպէս՝ «հայ պատերազմական իր ցան է յայտնում, որ իր օրինաւոր և միանգամայն չափաւոր պահանջները կօնգրէսի կողմից չընդունուեցին: Մենք կարծեցինք, թէ մի քանի միլիոնից բաղկացած մի ազգ, որ մինչև հիմա ոչ մի քաղաքականութեան գործիք չէ դարձել, որ, հնայելով իր աւելի հարստահարած լինելուն, քան թիւրքի միւս քրիստոնեայ ցեղերն, ոչ մի նեղութիւն չի պատճառել թիւրք կառավարութեան և որը, թէև ոչ մի մեծ պետութեան հաւատակից և ցեղակից չէ, բայց և այնպէս քրիստոնեայ լինելով, ինչպէս

Թիւրքիայի միւս քրիստոնեայ ժողովուրդները, այս մեր դարում կարող էր յուսալ, թէ միևնոյն պաշտպանութիւնը կը գտնէ, ինչ որ միւսները. մենք կարծեցինք թէ այսպիսի մի ազգ որն է քաղաքական փառասիրութիւն չունենալով՝ իրաւունք կը ստանայ իր սեփական կեանքով ապրելու և հայկական հողի վրայ՝ հայ պաշտօնեաների ձեռքով կառավարւելու: Հայերը հասկացան թէ խաբւելու են, թէ նրանց իրաւունքներն չեն ճանաչւել, որովհետեւ խաղաղասէր են եղել և թէ իրենց նախկին եկեղեցու անկախութիւնն ու իրանց ազգութիւնը պահելով ոչինչ չեն ձեռք բերել»:

«Հայ պատւիրակութիւնը պիտի դառնայ Արեւելք, իր հետ տանելով այդ դասը: Բայց նա յայտնում է այսուամենայնիւ, թէ հայ ժողովուրդն երբէք պիտի չդադարի ազադակ հանելու, մինչև որ Եւրոպան նրա պահանջներին արդար գոհացում չտայ»: Բերլին 12 յուլիսի 1878*):

Այս բողոքը, ի հարկէ, ոչինչ հետեանք չունեցաւ: Եւ հայ պատւիրակները ձեռնունայն յետ դարձան իրենց տեղերը:

Բ.

Բերլինի վեհաժողովից շատ և շատ դժգոհ մնաց հայերից աւելի ռուսական դիպլոմատիան:

*) Հայկ. ինդ. եր. 479.

Եւ իրաւունք ունէր, որովհետեւ վեհաժողովը հիմն ի վեր տապալեց Ս. Ստեփանօյի դաշնադրութեան հիմնական կէտերը ընդհանրապէս, և հայոց հարցին վերաբերեալ մասը՝ մասնաւորապէս:

Բայց 61-րդ յօդւածից էլ աւելի՝ ռուսական դիպլոմատիայի համար վիրաւորական էր Կիպրոսի դաշնագիրը, որ վեհաժողովի վերջին օրում հրատարակեց Բիկօնսֆիլդը ի լուր ամենքին, և որով Անգլիան սուր ի ձեռին դիմադրելու էր այնուհետեւ ռուսների յառաջխաղացմանը Տաճկաստանում:

Ինչպէս որ սպասելի էր՝ 61-րդ յօդւածից «Մշակ»-ն էլ գոհ չմնաց, ռուսի և «Ում կողմը պահենք» առաջնորդողում հետեւեալ տողերը գրեց՝ «Անգլիան աշխարհիս ամենալուսաւորւած երկիրն է, ազադակում են տգէտները: Աստուած չանի այդպէս լուսաւորւած լինել ինչպէս Անգլիան, ասում ենք մենք»: Այնուհետեւ թւելով Անգլիայի պակասութիւնները, Արծրունին վերջացնում է իր յօդւածը այսպէս, որ «հայերը ոչ լուսաւորւած Անգլիայի կողմը պիտի պահեն, ոչ էլ անիշխանական թիւրքերի»*):

Իսկ «Անգլիա և Թիւրքիա» վերնագրով առաջնորդողում Կիպրոսի դաշնագրի մասին խօսելով՝ «Մշակ»-ը գրում է**).

«Թիւրքիայի այլևայլ տեղերից շարունակ-

*) «Մշակ» 1878, № 142:

**) Նոյնը № 121:

ւում են ապստամբութիւններ ամբողջ պետութեան մէջ, ինչպէս վկայում են լրագրիւնները, տիրում է կատարեալ անիշխանութիւն: Ոչ միայն թիւրքիայի քրիստոնեայ ժողովուրդները, բայց և նոյնիսկ մահմեդական տարրը զայրացած է Անգլիայի դէմ: Քրիստոնեայ ազգաբնակչութեան հայեացքները ուղղած են դէպի Ռուսաստան, և ինքը թիւրք տէրութիւնը ամեն ջանք է անում աւելի և աւելի մօտենալ և բարեկամանալ Ռուսաստանին*):

Գ.

Վեհաժողովի 61-րդ յօդաժը և Կիպրոսի դաշնագիրը սաստիկ անհանգստացնում էին «Մշակ»-ին, որ շարունակ իր ընթերցողներին նրանցով էր զբաղեցնում, և որ խիստ քննադատութեամբ՝ աշխատում էր նրանց, — ընթերցողներին նրանց դէմ գինել:

Այսպէս՝ «Մի նշանաւոր խնդիր» առաջնորդողում**) դարձեալ Կիպրոսի դաշնագրի մասին խօսելիս՝ Արծրունին այն միտքն է յայտնում, որ Անգլիան Ռուսաստանին հակառակ դիրք բռնելով և հայերին կրօնափոխ անելով, նրանց կորուստ և

*) «Մշակ»-ի այս գուշակութիւնը կատարեց: Եւ մենք իր տեղում կը տեսնենք, որ Ռուսաստանը ոչ միայն բարեկամացաւ, այլ նաեւ մտերմացաւ թիւրքիայի հետ՝ հայկական հարցի նկատմամբ,

**) «Մշակ» 1878, № 202.

մահ է պատրաստում: Ուստի «Մշակ»-ը խորհուրդ է տալիս Ռուսաստանին, որ Տաճկաստանի զանազան քաղաքներում շատ հիւպատոսներ նշանակէ, ինչպէս այդ արեւ են անգլիացիք և նրբանց հետ մրցէ:

Միևնոյն այս միտքը, մեծ եռանդով, քարոզում և պաշտպանում է Գր. Նիկողոսեանը*):

«Վերջապէս բաց անենք աչքերը» առաջնորդողով «Մշակը» զգուշացնում է հայերին Անգլիայից, որ նրանց կրօնափոխ անելով չպիտի բաւականանայ, այլ նաեւ թիւրքերին և քիւրդ ցեղապետներին պաշտպանելով՝ հայերին պիտի ճնշէ, նրանց ստրուկը շինէ**):

«Այժմ Անգլիան ինչ պիտի անէ» առաջնորդողով***) Արծրունին աւելի առաջ է գնում և յայտնելով, որ ամբողջ թիւրքիայում, ևս և Զէյթունում ապստամբութիւն է տարածւել, պնդում է, որ Անգլիան Կիպրոսի դաշնագրութեան զօրութեամբ՝ այժմ կաշխատի Տաճկաստանին պահել ոչ միայն Ռուսաստանի դէմ, այլ նաեւ ներքին թշնամիների դէմ և «երեսիցը կատարելապէս դիմակը հանելով՝ նա (Անգլիան) ցոյց կուտայ, որ իր գլխաւոր և միակ նպատակն է բոլորովին միանալով մահմեդականութեան հետ աշխատել խեղդել և խաղառ ջնջել քրիստոնէութիւնը Արեւելքում»:

*) «Մշակ» 1878, № 204

**) «Մշակ» 1878, № 204

***) Նոյնը № 126

Գ.

Կարծես «Մշակ»-ի այս միտքը հաստատելու նպատակաւ՝ նրա էրզրումի աշխատակից Գ. Նիկողոսեանը, ըստ երևոյթին, ուզում է բացատրել թէ ինչո՞ւ Անգլիան աշխատում է քրիստոնէութիւնը Արևելքում ջնջել: Պարոնը գրում է՝ «Բիկօնսֆիլդի դէպի մեզ (հայերիս) թշնամական յարաբերութեան շարժառիթներից մէկը չէ՞ եղել արդեօք նախանձը, որ զգացել է իսրայէլացի կոմսը և իր սրտում, երբ երկու հնագարեան ազգերից մինը, — հայերը արտայայտել են ազգայնութեան և քաղաքական կեանքի նշաններ և կարողութիւն, մինչդեռ միւսը նրանցից իր միաբնակ մշտնջենական ազգը մնացել է թափառական, հայրենազուրկ, տարագիր ամեն ազգերի՝ անգամ և բոլոր աշխարհիս խորդ*):

Ուստի Բիկօնսֆիլդի այդ նախանձոտութիւնը պատժելու համար, երևի Գր. Նիկողոսեանը յայտարարում է, որ էրզրումի հայ տղամարդիկը և կանայքը, առանձին-առանձին, միմի հանրագիր են պատրաստել „Голосъ“՝ ռուսական ազատամիտ թերթի անունով, որին իրենց գոհունակութիւն են յայտնել Ս. Ստեփանօսի դաշնագրի 16-րդ յօդածի առթիւ: Նիկողոսեանը նոյնիսկ դուրս է բերել իր թղթակցութիւնում էրզրումցի տղամարդկանց հանրագրի բովանդակութիւնը:

Իր աշխատակցի այս վերջին տողերն և էր-

*) «Մշակ» 1878 № 131

զրումցիները ցանկութիւնը հաստատելու համար՝ «Մշակ»-ի խմբագիրն ևս, իր հերթում, «Թիւրքաց Հայաստանի վիճակը» առաջնորդողում յայտնում է, որ էրզրումցիք ցանկանում են, որ Ռուսաստանը յաղթէ, որովհետև նրանք «պարզ տեսնելով, որ լուսաւորած անգլիացիների ամենահաւատարիմ դաշնակիցները լինելու են մոլեռանդ թիւրքերը, վայրենի և աւագակ քիւրդերը, չէրքէզները և լազերը», որոնց, — գրում է «Մշակը», — «անգլիացիք զինում են որպէսզի նրանք ճնշեն, կոտորեն, խեղդեն հայերին*):

Եւ որովհետև Ռուսաստանը նրանց, — հայերին 16-րդ յօդած է շնորհել, — ուստի թող հայերը չգաղթեն, այլ մնալով իրենց երկրում զինւին, ապստամբին**):

Եւ որպէսզի հայերի այդ զինւորումն ու ապստամբութիւնը, ըստ իմ ենթադրութեան, լեզալ ճանապարհով լինի, — ուստի «Մշակ»-ը մի այլ առաջնորդողում, — «Կ. Պօլսի Հայոց ազգային ժողովը» վերնագրով***)) առաջարկում է թէ՛ որովհետև Անգլիան Կիպրոսի դաշնագրի զօրութեամբ Հայաստանին տէր դառնալով՝ մրտքումը դրել է հայերին բնաջինջ անել, — ուստի թող Ազգային ժողովը Վան կամ էրզրում տեղափոխւի:

*) «Մշակ» 1878 № 132

**) Նոյնը, № 135

***)) Նոյնը, 1878, № 141

Ե.

Կիպրոսի դաշնագրի պատճառաւ՝ Անգլիայի դիրքը դէպի տաճկահայերը՝ որքան որ վտանգաւոր և կործանարար էր համարում Գրիգոր Արծրունին, — ընդհակառակը՝ Ներսէս պատրիարքը Անգլիայի այդ դիրքը՝ օգտակար և փրկարար էր յայտարարում իր այն ճառի մէջ, որ Ազգային ժողովի երեսփոխաններին ուղղեց ասելով... «Իսկ մենք, տեարք երեսփոխանք, մենք յարտաւենք մեր սկսած գործին մէջ: Այսպիսի գործեր ոչ մէկ օրուան մէջ, ոչ մէկ մարդու ձեռքով կըրնան կատարել: Պատրաստուենք մեր ապագային: Նախ՝ չկենանք հոս: Հայաստան երթանք, Հայաստան զրկենք ինչ որ ունենք ազգիս մէջ բանիբուն, տաղանդաւոր, ազգասէր, ուսումնասէր եկեղեցականներ, Հայաստան երթան մեր դաստիարակներ, ուսուցիչներ, մեր այնքան վառվռուն երիտասարդներ, Հայաստան երթան մեր այնքան դժբաղդ պանդուխտներ. ոչ ևս պիտի ըլլայ հոն սով, սրածովիւն, ոչ ևս հարստահարութիւն, ոչ ևս կենաց և ընչից և պատուոյ առևանգութիւն, ոչ ևս աշխատութեան խաբանում, ուղիներ պիտի բացուին, ջրանցքներ պիտի շինուին, գործարաններ պիտի կառուցուին: Անգղիոյ դրամատէրք հոն պիտի երթան իրենց դրամը գործածելու. թող երթան մեր դրամատէրք ալ, ընկերութիւններ կազմեն այս օրերնէ. ընկերութիւններ ամեն քաղաք ու գիւղ՝

գալրոցներ հաստատելու համար, ընկերութիւններ՝ առևտրական յարաբերութիւններ հաստատելու համար, ընկերութիւններ՝ գործարաններ հաստատելու համար... Եւ այն ատեն թերևս ես ալ ցաւագար և անբուժելի հիւանդութեամբ *) վարակեալ ի գերեզման իջած ըլլամ արդէն, այլ տեսնելով այսքան ազգային միասիրտ, միահոգի աշխատութեան արդիւնքները, տեսնելով պսակուած մեր այսօրուան բոլոր յոյսերը, հոգիս պիտի խայտայ գերեզմանիս մէջէն և պիտի ընդգրկէ մեր սիրելի նախնեաց հոգիներ» **):

2.

Ինչ բանի վրայ էր հիմնում Ներսէս պատրիարքը իր այս լաւատեսութիւնը:

— Այն գործունէութեան վրայ, որին Անգլիան ձեռնարկեց Տաճկաստանը բարեկարգելու համար:

«Բերլինի դաշնագրից անմիջապէս յետոյ, — գրում է պատմիչը, — Անգլիան իր հիւպատոսաբանների ընդունակ աստիճանաւորներին ցրեց Փոքր Ասիա, պատուիրելով, որ անյաղաղ հաւաքեն և կեդրոնական վարչութեանը տեղեկագրեն երկրի ընդհանուր դրութիւնը և ցոյց տան այն ամեն միջոցներն ու բարենորոգումները վարչական ամեն մի ճիւղում, ինչ որ անհրաժեշտ էր

*) Ներսէս պատրիարքը շաքարի հիւանդութիւն ունէր:

**) Լէօ. Գրիգոր Արծրունի, II, եր. 83—84.

պահանջել Բ. Դոնից: Եւ ահա այս տեղեկու-
թիւններն են, որ անգլիական կապույտ զբքի հե-
տաքրքիր գրականութիւնն են կազմում» *):

Դժբաղդաբար այս տեղեկութիւնները բա-
ւարար նիւթ չմատակարարեցին անգլիական
գեսպանին՝ Հայկական հարցի մասին մի հիմնա-
ւոր կէտի վրայ կանգ առնելու:

Այս մէկ կողմից:

Միւս կողմից Պօլսոյ պատրիարքարանը ու-
րին յաճախ դիմում էր Հայեարդք, իր հաղորդած
անճիշտ թւանշաններով և միակողմանի, ու
չստուգւած տեղեկութիւններով, չկարողացաւ
գեսպանի վստահութիւնը գրաւել: Եւ վերջինս,
այսպիսով, հնարաւորութիւն չունեցաւ մի որոշ
և հաստատուն ծրագիր առաջարկել Բ. Դրանը:

Հայարդքին փոխեցին:

Նրան յաջորդող Գօշէնը յատուկ հրահանգ
ունէր ամենայն եռանդով և վստահութեամբ՝
սկսած գործը առաջ տանելու և տաճկական
վարչութեան իւրաքանչիւր ճիւղում նկատւած
պակասութիւնների վրայ մատնացոյց լինելով՝
խստութեամբ և շարունակաբար պահանջել Բ.
Դոնից նրանց վերացումը:

Սակայն անգլիական քաղաքականութեան այս
սրտագին հետամտութիւնը Փոքր Ասիան բարե-
նորոգման շաւղի մէջ դնելու նկատմամբ՝ բնաւ
դիւր չեկաւ մասնաւորապէս Ռուսաստանին, որ
ինչպէս տեսանք, շատ առիթներ ունէր Անգլիա-

*) Լինչ՝ Арменія, II, եր. 528:

յից դժգոհ լինելու՝ այն փոփոխութիւնների հա-
մար, որին ենթարկւեցաւ Բերլինի վեհաժողո-
վում Ս. Ստեֆանոյի դաշնագիրը ընդհանրապէս
և Հայկական հարցին վերաբերեալ 16-րդ յօդ-
ւածը մասնաւորապէս:

Եթէ Անգլիան թոյլ չտւեց, որ Տաճկաստա-
նի բարեկարգելու գործը Ռուսաստանի ձեռքում
մնայ ըստ Ս. Ստեֆանոյի դաշնագրի, — այժմ էլ
Ռուսաստանը ձեռնարկեց թոյլ չտալու, որ յի-
շեալ գործը Անգլիայի ձեռքում մնայ ըստ Բեր-
լինի վեհաժողովի, և նամանաւանդ՝ ըստ Կիպ-
րոսի դաշնագրի:

Եկել հասել էր ժամանակը, երբ Ռուսաս-
տանը կարող էր վրէժխնդիր լինել Անգլիայի
նրանից ստացած վիրաւորանքների և նրա քա-
ղաքական ծրագիրները քարուքանդ անելու հա-
մար:

Է.

Աբգիւլ Համիդը, իրեն յատուկ ճարպիկու-
թեամբ՝ իսկոյն ըմբռնեց անգլիական և ռուսա-
կան դիպլոմատիայի այս լարւած բոլէի կարե-
ւորութիւնը իրեն համար, և իսկոյն նրա շահա-
գործմանը ձեռնամուխ եղաւ: Անգլիական գես-
պանի պարբերական ցուցումներ և պահանջնե-
րին վերջ դնել տալու համար՝ թիւրքաց արտա-
քին գործերի մինիստիրը, մի գեղեցիկ օր, յան-
կարծ նկատեց գեսպանին թէ 1877 թուի պատե-

բազմի պատասխանատուն իսկապէս ինքը Անգլիան է: Եւ դրա համար էլ, — վրայ բերեց Սէրվէր փաշան, — մենք մեզ իրաւունք ենք համարում այլեւ չլսել նրա խորհուրդներին, և «այսուհետեւ մենք ուսման ղաշնակիցը կը լինենք» *):

Առաջին անգամն էր, որ անգլիական դիպլոմատիան՝ այսքան համարձակ կերպով և այսպիսի քաղաքական ապտակ էր ստանում Օսմանեան կառավարութեան ձեռքից: — Եւ այդ ապտակը Անգլիայի երեսին տալիս էր Աբդիւլ Համիդը այն օրերին, երբ ամբողջ Անգլիան գրեթէ իր միտինգներով, իր լրագիրներով ոտքի էր կանգնել ի պաշտպանութիւն Տաճկաստանի բարենորոգումներին: Երբ ազատամիտ կուսակցութեան պարագլուխ Գլադստօնը իր կրակոտ ճառերով ուժեղացնում էր կառավարութեանը և յատկապէս իր կուսակից Լօրդ Ռոզբէրին, որ այն ժամանակ պրեմիեր մինիստր էր, և պահանջելով պահանջում էր դրական միջոցներ ձեռք առնել կիպրոսի ղաշնագիրը ընդ փոյթ իրազործելու համար:

Երբ վերջապէս դուքս Բէյստը հանգիսաւոր կերպով յայտարարում էր թէ՛ «Տաճկաստանի բոլոր հպատակներին պէտք է վերցնել Եւրոպայի հովանաւորութեան տակ՝ տալով նրանց, եւրոպական դահլիճների երաշխաւորութեամբ, ան-

*) Մակկոլ՝ Султанъ и державы, Կր. 122:

կախ սահմանադրութիւններ ըստ իրանց կրօնի և ցեղի» *):

Սակայն ի զարմանս անգլիական ժողովրդին, և համանաւանդ ի զարմանս և յափշտութիւն Գլադստօնին, — ազատական կուսակցութեան ներկայացուցիչ պրեմիեր-մինիստր Րոզբէրին՝ վարանւում և տատանւում էր: Սէրվէր փաշայի բերնից թռած այն պարբերութիւնը թէ՛ «այսուհետեւ մենք ուսման ղաշնակից կը լինենք», — Ռոզբէրին պատահականութիւն չէր համարում, ոչ էլ կրքոտութեան, կամ անտեղի սպառնանքի հետեանք, — այլ անշուշտ մի որոշ, նախապատրաստած ծրագրի արդիւնք: Եւ այս ծրագիրը՝ չէր կարող սոսկ Բ. Դոնից և Պետրօգրադի դահլիճից բղխել, այլ անպատճառ նաև ուրիշ պետութիւնների դահլիճներից:

Ուժեր կարող էին լինել այդ պետութիւնները, որոնք թե ու թիկունք էին դարձել ուսական դիպլոմատիային՝ Բերլինում կրած պարտութեան համար՝ վրէժխնդիր լինելու Անգլիային:

Առանց ուշադրութիւն դարձնելու՝ իր շուրջը տեղի ունեցող աղաղակներին և պահանջներին և նոյնիսկ իր կուսակից ու դաւանակից Գլադստօնի յարձակումներին, — Ռոզբէրին հետամուտ եղաւ Բ. Դրան և Պետրօգրադի դահլիճի ետքիւում՝ թազկացած դիպլոմատներին գտնելու և գտաւ:

*) Султ. и державы, Կր. 138.

Ը.

Այդ զիպլումատներն էին՝ Բիսմարքը և Գոլուխովսկին, — Գերմանիայի և Աւստրիայի պրեմիեր-մինիստրները:

Անգլիայի պրեմիեր-մինիստր Բիկոնսֆիլդը, — որին սովորաբար Թիւրքոֆիլ ենք անուանում, — Թիւրքիային բարեկամ ու պաշտպան ձեռնալով միմիայն մի նպատակ ունէր, — ճշշել, թուլացնել Ռուսաստանին:

Բիսմարքն էլ, իր հերթում, Ռուսաստանին բարեկամ ձեռնալով, Անգլիային էր ուզում ճշշել, թուլացնել: Գոլուխովսկին՝ Բիսմարքից աւելի ցանկանում էր թէ՛ Անգլիայի և թէ՛ Ռուսաստանի թուլացումը, որպէսզի Կ. Պոլսին տիրելու իր ունեցած շանսերը շատանան:

Բիսմարքը շատ համակիր էր Գոլուխովսկու այդ ձգտմանը, վասնզի այնուհետեւ Գերմանիայի շանսերը կը շատանային՝ Աւստրիայի հիւսիսային, գերմանական մասը՝ իրեն հետ միացնելու իւր աւելի քան 10 միլիօն գերմանացիներով: Դարձեալ Աւստրիային ամենակին ձեռնառու չէր, որ Փոքր Ասիան բարեկարգուի: Որովհետեւ այնուհետեւ բարեկարգւելու հերթը գալու էր Մակեդոնիային, որի վրայ Աւստրիան միշտ իր աչքը տնկած էր պահում, մի օր վերջապէս տիրելու համար:

Իսկ մի երկրի տիրելու համար՝ ամենալաւ առիթ ընծայողը՝ այդ երկրի անբարեկարգ վի-

ճակն է զիպլումատների համար: Հեշտութեամբ և առատութեամբ ձուկ որսալը՝ միշտ պղտոր ջրեւումն է լինում:

Թ.

Բիսմարքը, սովորաբար, այսպիսի քաղաքականութեան էր հետևում: Նա «իր զօհին առաջ խելքից հանում էր (дурачить), յետոյ նրան դաւաճանում և ապա խեղդում» *):

Եւ այդ քաղաքականութեամբ՝ ոչ թէ միմիայն Ռուսաստանին և Աւստրիային գրաւեց, այլ նաև Ֆրանսիային՝ յանձին նրա պրեմիեր-մինիստր Ուատինգտոնին:

Որքան որ 1870-ին Աւստրիայի և Իտալիայի հետ երրեակ զինակցութիւնը կազմելով Բիսմարքը իր ստեղծած գերմանական կայսրութիւնը ապահովեց երկու կողմից, — Ֆրանսիայի և Ռուսաստանի, բայց և այնպէս նա միշտ վախ ունէր նաև երրորդ կողմից, — Անգլիայից:

Բիսմարքը՝ իրեն յատուկ հեռատեսութեամբ, իրեն, այսպէս ասած, քաղաքական սուր հոտառութեամբ, զգում էր, որ մի օր, Գերմանիան կանգնելու էր «երրեակ համաձայնութեան» հանդէպ: Ուստի և ամեն կերպ աշխատում էր խաբանել, խանգարել այդ «համաձայնութիւնը»: Եւ, ով գիտէ, թերևս մենք այսօր ահանառես չլինէինք այն անդնդային տեսարաններին, որոց հանդէպ կանգնած է Բիսմարքի ստեղծած կայ-

*) Султанъ и державы, Կր. 90.

սերութիւնը, եթէ ինքը, Բիսմարքը մեռած չը լինէր:

Արդ՝ ապագայ «երբեակ համաձայնութեան» խաբանման լաւ առիթ էր ընծայում Կիպրոսի դաշնադրութիւնը և նրա առթիւ՝ Ռուսաստանի լարուածութիւնը Անգլիայի դէմ:

Բիսմարքը մեծ ճարպիկութեամբ՝ ինքը մի կողմ կանգնած՝ Անգլիայի դէմ զինեց Ռուսաստանին, Աւստրիային և Ֆրանսիային *):

Եւ անա թէ ինչու համար՝ Լօրդ Ռօզբէրին վարանում և տատանում էր միայնակ ստիպել Տաճկաստանին Փոքր Ասիայում բարենորոգումները փութացնելու:

Նա իր աչքի առաջ ունէր Պետրօգրադից ստացւած այն հեռագիրը թէ՛ «ոչ մի հանգամանքում Ռուսաստանը չի թոյլ տայ և չի պաշտպանել հայերի համար՝ որեւէ ճնշումն, կամ ստիպողական միջոց գործադրելի Բ. Դրան վրայ» **):

Ռօզբէրին այս էլ ստուգեց, որ Ռուսաստանի բերանով Անգլիայի հետ այսպէս խօսում են նաև Գերմանիան, և Ֆրանսիան և Աւստրիան ***):

Ժ.

Այս ամենը ստուգելուց յետոյ՝ Ռօզբէրին հրապարակ իջաւ իր անձը արդարացնելու հա-

*) Նոյնը, հր. 11:

**) Նոյնը, հր. 205.

***) Նոյնը, հր. 47 տես նաև Զիվէլէկեանի «Армяне въ Россіи» գրքոյկը, հր. 17:

մար անգլիական ազգի և իր կուսակցութեան (ազատամիտներ) առաջ:

«Այս երկրի (Անգլիայի) քաղաքականութիւնը, — ասաց Ռօզբէրին Էդենբուրգի միտինգում, — բաղկացած է 1000 շահերից, և մենք չենք կարող 999 մասը զոհել մէկ, — թէկուզ նշանաւոր, — մասի համար» *):

«Ես խորապէս համոզւած եմ, որ մեծ պետութիւնների մէջ արդէն տեղի է ունեցել որոշ և վճռական համաձայնութիւն, ուժով զիմադրելու Անգլիայի միայնակ միջամտութեան արեւելքի գործերում» **):

...«Անգլիայի այն մինիստրը, — ով էլ որ լինի — որ եւրոպական պատերազմի մէջ կը խրճճւի՝ առանց ամենաանհրաժեշտ շարժառիթի, առանց զուտ անգլիական որոշ շահերի պաշտպանման անհրաժեշտութեան, — այդպիսի մինիստրը՝ յանցանք գործած կը լինի իր հայրենիքի և իր ստանձնած պաշտօնի դէմ» ***):

Այս ճառով իր անձը արդարացնելով՝ Ռօզբէրին յօժարակամ թողեց իր պաշտօնը, որպէս զի շարունակելով պաշտօնը կաշկանդած չլինի անգլիական ազգի ազատութիւնը՝ գործելու այնպէս, ինչպէս որ ինքը գուցէ աւելի օգտակար կը համարէ իրեն համար:

*) Султанъ и державы, հր. 211:

**) Նոյնը, հր. 204:

***) Նոյնը, հր. 211:

Սակայն Ռօդբէրիի հրաժարմամբ՝ նրա դա-
դափառն ու հայեացքը չանհետացաւ, չարհա-
մարհւեցաւ: Ընդհակառակը՝ անգլիացիք մեծա-
մասնութեամբ ընդունելով և ընդգրկելով Ռօդ-
բէրիի հայեացքը՝ ձեռք քաշեցին Բ. Դրան վրայ
ճնշում դործ դնելուց կամ միայնակ հրապարակ
գալուց, այլ Պիղատոսի նման իրենց ձեռքները
լալով՝ տաճկահայերին Տաճկաստանի և Ռու-
սաստանի ձեռքը տուին... «զի խաչեսցի».—

ԺԱ.

Մինչև Պետրոս Մեծի Արևելքի վրայ աչք
ունենալն՝ Տաճկաստանի հայ քրիստոնեաներն,
ընդհանրապէս հանգիստ և լաւ էին ապրում Օս-
մանեան գահի հովանաւորութեան տակ: Կրօնի
և լեզուի կատարեալ ազատութիւն էին վայելում,
տնտեսապէս բարեկեցիկ վիճակ ունէին, առևտրի
և արհեստների մէջ առաջին տեղն էին բռնում
Օսմանեան կառավարութեան միւս հպատակների
մէջ, պետական և հասարակական գործունէու-
թեան տապօրէշը՝ նրանց համար միշտ բաց էր
լինում:

Օգտուելով վերջին հանգամանքից՝ Պօլսոյ
հայութիւնը իր զաւակներին արտասահման էր
ուղարկում ուսում և գիտութիւն ստանալու:

Այս հանգամանքի շնորհիւ էլ՝ Կ. Պօլսը
վիտտում էր հայ բժիշկներով, հայ իրաւաբաննե-
րով, հայ ճարտարապետներով, հայ գրականա-
գէտներով և այլն:

Տաճկահայ գիւղացին ահագին քանակու-
թեամբ հողեր ունէր իր տրամադրութեան տակ,
և մշակում էր, անարգել վայելելով նրա պտու-
ղը: Նրա ախոռը՝ լի էր կենդանիներով, մարա-
գը՝ յարգով ու խոտով, ամբարը ցորենով ու
գարիով, իսկ նկուղը՝ իւղով ու մեղրով և ամեն
տեսակ ուտելիքներով *):

Ընդհանուր կոտորած, ժողովրդական ջարդ,
քաղաքների և գիւղերի աւարառութիւն և աւե-
րում, կանանց յափշտակութիւն և առևանգում,
արտագաղթումն և այլ այսպիսի աղէտներ՝ գոյու-
թիւն չունէին Տաճկահայաստանում մինչև այն
օրը, երբ Օսմանեան կառավարութիւնը՝ ոչ մի
կասկած չունէր տաճկահայերի բարեյուսութեան
վրայ:

Դժբախտաբար այդ կասկածը ծագեցաւ: Եւ
ծագեցաւ այն օրից, ինչպէս ասացի, երբ ոռւս
կառավարութիւնը իր աչքը դէպի Արևելք դարձ-
րեց և սկսեց հետզհետէ յառաջ խաղալ:

Այդ յառաջխաղացման մէջ, ինչպէս տե-
սանք, ոռւսական քաղաքականութեանը մեծապէս
օգնեց, թե ու թիկունք եղաւ, նախ պարսկա-
հայը և ապա տաճկահայը, չունենալով ոչ մի
այլ զօրաւոր, հիմնական պատճառ, քան դաւա-
նակցութիւնը ոռւսների հետ, — քրիստոնէութիւնը:

Այդ դաւանակցութեան գաղափարով ոգևոր-
ւած ու տոգորւած՝ հայ ազգը, մի ժամանակ,

*) Դիլլոն, եր. 9, 10, 16, 18, 35 և և Տրիո, եր.
389, նոյնպէս истор. члов. հատ V, եր. 201.

Արշակունեաց հարստութիւնից զրկւեցաւ, մի ալլ ժամանակ՝ Բագրատունեաց հարստութիւնից, և մի ալլ, և երրորդ ժամանակ, Ռուբինեանց հարստութիւնից *):

Այնուհետեւ, 17-րդ դարից սկսեալ, հայ ազգը դաւանակից Ռուսաւատանին փարեցաւ, և կրեց այն տառապանքները, ինչ որ տեսանք մեր նկարագրութիւնների մէջ մինչև հիմայ, և դեռ կը տեսնենք այսուհետեւ ևս:

ԺԲ.

Երբ Օսմանեան կառավարութիւնը տեսաւ, որ իր դարաւոր, հաւատարիմ հպատակ հայերը՝ իրենց դաւանակից ոսներին յարեցան ու փարեցան և սկսեցին նրա զօրաբանականներին խաչով ու խաչվառով դիմաւորել, նրանց համար պաշար հայթայթել, ճանապարհներ հարթել, մինչև անգամ նրանց շարքերի մէջ մտնելով՝ իրեն, — տիրապետող իշխանութեան գէմ գէնք բարձրացնել, — այսինքն՝ Ռուսաւատանի ևս այն ամեն ծառայութիւնը մատուցանել, ինչ որ մի ժամանակ մատուցել էին Բիւզանդիոսին և Հոռմին, շատ պարզ է, որ այդ իշխանութիւնը չէր կարող ալլ ևս անտարբեր մնալ և միջոցներ ձեռք կառնել հայերին սանձահարելու, պատժելու:

Եւ ահա այդ սանձահարման հետեանքն եղան այն մեծ ու փոքր կոտորածներն և հալա-

*) Տես իմ «պատմութեան դասեր» յօդաւոր՝ «Հովիտ» 1912 № № 42, 43, 44 և 45:

ծանքները, որ ամեն մի ռուս-տաճկական պատերազմի նախօրէկին կամ նրանից յետոյ՝ տեղի էին ունենում Տաճկահայաստանի այս ու այն մասում քիւրդ և տաճիկ ազգաբնակչութեան կողմից Բ. Դրան գաղտնի թելադրութեամբ:

Բայց հայերի այդ մասայական կոտորածներն՝ ընդհանրացան և որոշ սխտեմի տակ գրւեցան ամբողջ տաճկահայութիւնը բնաջինջ անելու նպատակաւ, 1877 թւականի ռուս-տաճկական պատերազմից յետոյ, և նրա հետեանքով:

Ընթերցողն արդէն գիտէ թէ ինչ նպատակաւ տաճկահայերն իրանց հարցը Ս. Ստեփանօյի դաշնադրին մէջ մտցնել տուին: Գիտէ այն ևս՝ թէ ռուս դիւանագիտութիւնը՝ ինչ նպատակաւ՝ 16-րդ յօդաւոր ստեղծեց:

Ընթերցողն այն ևս գիտէ՝ թէ Անգլիան ինչ նպատակաւ՝ 16-րդ յօդաւոր՝ 61-րդի փոխարկել տւեց Բերլինում:

Այս ամենը տեսնելով՝ Օսմանեան կառավարութիւնը բաց աչքով տեսաւ, որ իր հպատակ հայերը այլևս առաջւանք չեն, որ նրանք ոչ միայն գլխացաւանք, այլև կատարեալ փորձանք են դառնալու շուտով իր գլխին, և ընչաքաղց եւրոպան, նրա այս ու այն պետութիւնը՝ Հայկական հարցն ևս, մանր ազգերին վերաբերեալ միւս հարցերի նման, իրան մատին փաթաթան արած՝ պիտի սկսէ իր սեպհական, անճանական քաղաքական հաշիւներն առաջ տանել, — Օսմանեան կառավարութիւնը ձեռնարկեց իր . . .

Սակայն երբ հրապարակի վրայ նետուցաւ Կիպրոսի դաշնագիրը,— այնուհետեւ ոչ մի կասկած չէր կարող լինել, որ Տաճկահայաստանի բարեկարգութիւնը Անգլիայի ձեռքով՝ ոչ միայն անխուսափելի է, այլ նաեւ մօտաւորապէս:

Որսը ձեռքի տակից՝ փախչում էր: Անհրաժեշտ էր վազ տալ ետքեիցը և բռնել:

Եւ ահա «Մշակ»-ում կարկտի նման տեղալ սկսան այն յարձակումներն ու հայոյանքներն, որոնք Արծրունու խմբագրականներով և նրա էրզրումի աշխատակցի թղթակցութիւններով՝ թափուում էին Անգլիայի... գլխին *):

Մասամբ «Մշակին» կանխելով, մասամբ էլ՝ նրան հետեւելով՝ Ռուսաստանի մամուլն ևս՝ իր փետուրիայ նետերն ու սլաքներն նոյնպէս ուղղել սկսեց Անգլիայի դէմ:

ՓԳ.

Մամուլը, կամ նրան խօսեցնել տուող քաղաքականութիւնը, ի հարկէ, շատ լաւ հասկանում էր, որ «Մշակ»-ի և նրա ողորդող համհարդներին հարւածներով՝ Անգլիան ոչ կը խոցոտուէր,

*) Այդ խմբագրականների և թղթակցութիւնների բովանդակութեանը ընթերցողն արդէն ծանօթ է:

ոչ էլ իր քայլերը կը կասեցնէր: Բայց մամուլի խօսելը, և կրկնելն ու երեքնելը անհրաժեշտ էին Կովկասի հայութեան մէջ տրամադրութիւն յառաջ բերել՝ Կիպրոսի դաշնագրի գործադրութիւնը խափանող՝ գործնական քայլի գիմելու:

Այդ գործնական քայլի նախաբանը կազմում էին «Մշակ»-ի այն խմբագրականներն, որոնցմով նա դեռ նախքան պատերազմը, գրգռուում էր տաճկահայերին ապստամբելու կառավարութեան դէմ:

Բայց այդ բանը գլուխ չեկաւ այն ժամանակ: Իսկ այժմ, պատերազմը վերջանալուց յետոյ՝ ինչպէս երևում է, գլուխ էր եկել, որովհետեւ «Մշակ»-ի խմբագիրը Թիֆլիսում Տաճկահայաստանի մասին կարգացած իր դասախօսութիւնում հանդիսաւորապէս յայտնեց իր ունկնդիրներին թէ՝ «վերջին ժամանակ մեր լրագիրները(*) թղթակիցները հաղորդում են, որ Թիւրքիայի հայը զրեթէ ամեն տեղ սկսում է զինւել, բայց արդեօք դրանով նա ընդդէմ է գնում իր բռնած պատմական ընթացքին: Չեմ կարծում: Եթէ հայը Թիւրքիայում զինւում է միայն նրբա համար, որ բռնութեան դէմ**) պաշտպանողական զինք ***) բռնէ միայն և ոչ թէ յարձակո-

*) Թէ «Մշակի» և թէ նրա ողորդող համհարդների:

**) Եթէ ընթերցողը յիշում է՝ բռնութիւնը Անգլիային էր վերագրում «Մշակը»:

***) Հայ յեղափոխականները իրենց գրգռչական պրօվակատօրական քայլերը միշտ և հանապաղ այս բառովն են արդարացնում միամտաբար:

դական *):

«Մշակ»-ը իր այս յայտնութիւնը հաստատում էր Կ. Պօլսոյ իր թղթակցի հետեւեալ տողերով՝ «լրագիրները կը հաստատեն թէ՛ յանուն ազգային վրէժխնդրութեան հայոց զինեալ զօրեղ խմբեր յարձակեր են Վասպուրականի քիւրդ գիւղերու վրայ և 7 գիւղ այրել, մըրկել են»:

«Համոզում կայ,—շարունակում է Հայկա-կը,—որ եթէ այս դէպքը ճշմարիտ լինի (?!), Եւրոպայի վրայ խոր տպաւորութիւն մը պիտի ընէ և հայկական խնդրոյն այնպիսի քայլ մը ա-նել պիտի տայ, յորմէ շատ և շատ գոհ պիտի լի-նին (ովքեր)»:

Դարձեալ . . . «Հայոց խնդիրն, այս օրերս երկրորդական կերպարանք մը առած էր յու-նաց և մօնթէնէզրօյի հարցի բաղդատմամբ, երկու ասուր մէջ կերպարանափոխ եղաւ հա-յոց զինեալ խմբերու արշաւանաց շնորհիւ: Կը-սեն որ (ով կըսէ) այս միջոցին Վանայ մէջ ալ շարժում մը տեղի պիտի ունենայ: Այն ատեն իրանց վիճակը անհաշուելի կերպով կը լաւա-նայ **):

ԺԴ.

Հայկակի այս լուրը մեծ բաւականութիւն էր պատճառել մեր «պատմաբան» Լէօյին, որ

*) Լէօ՝ Դրիգոր Արծրունի, Գ. եր. 128:

**) Նոյնը, եր. 177:

ահա թէ ինչ էր գրում այդ տղիւ՝ «*)» եթէ չլինէր էլ հայերի զինւած շարժումը, պէտք էր նրան ստեղծել»:

Եւ, ի մխիթարութիւն մեր «պատմաբանին», շարժումը ստեղծեց:

— «Երկու ուս թերթեր,—գրում էր Լէ-օն,—նոյնպէս լուրեր տպեցին թիւրքահայերի շարժման մասին, իսկ գրանցից մէկը «Новое Время»-ն նոյնիսկ մի համակրական առաջ որ-դող նւիրեց այդ շարժման»**):

— «Մշակ»-ը տպեց,—շարունակում է Լէ-օն,— Իգդիրից ստացած իր հեռագիրը, որ հա-ղորդում էր՝ թէ Վանի հայերի մէջ ապստամ-բութիւն է ծագել, սպանւած հայերի թիւը 70-ի է հասնում: Արծրունին,—շարունակում է Լէօն,—ինչպէս երևում է, շատ մեծ հաւատով չը վերաբերեց իր սեփական թղթակցի հեռա-գրին: Ուստի առաջնորդողի մէջ բերելով այդ հեռագրի բովանդակութիւնը, նա դիմեց և ուս լրագրի վկայութեանը և ապա կարողացաւ ասել թէ՛ «զինեալ շարժման լուրը հաստատում է»:

*) Նոյնը, եր. 178:

**) Նոյնը, եր. 179: Ի տեղեկութիւն իմ ընթեր-ցողներին ես պէտք է յայտնեմ, որ Սուլօրօվի «Но-вое Время» և Կաակովի «Московск. Вѣдомости» հա-յակեր թերթերը՝ պատերազմների ժամանակ միշտ հա-յասէր էին դառնում և հայոց համար համակրական յօդւածներ գրում, որոնց կարդալիս՝ ես միշտ միտս էի բերում Կռիլովի «Добрая лисица» առակը:

Բայց բանը նրանումն է, ընթերցող, որ «այդպիսի շարժում, որքան մենք գիտենք այժմ, — գրում է Լէօն, — չէ եղել և Իգգիլիի հեռագիրը, հաւանականօրէն, հիմնւած է եղել նոյն այն լուրերի վրայ, որոնք անցել էին եւրոպական թերթի և ուսու լրագրութեան մէջ»*):

«Մի քանի օրից յետոյ, — գրում է Լէօն, — Իգգիլիից մի հեռագիր հաղորդում էր, որ Վասպուրականում գինւած հայերը միացել են Ասորիների հետ, որոնք Մար-Շիմօնի առաջնորդութեամբ են գործում. Մուշի կողմերում մի քանի քիւրդ ցեղեր իրենց օգնութիւնն են առաջարկում գինւած հայերին»*):

Իգգիլիում թիււած այս երկրորդ, և սուտ ու պրօվակատիօն լուրից Արծրունին աւելի ևս ոգևորելով՝ փութաց հետևեալ աւետիքը հաղորդել հայութեանը, որ իբրև թէ՝ «վերջապէս թիւրքաց Հայաստանի ամբողջ ազգաբնակչութեան մէջ սկսում են համերաշխութեան ցոյցեր երևալ, — Հայաստանի թէ հայ, թէ ասորի և թէ քիւրդ ազգաբնակչութիւնները վերջապէս սկսում են հասկանալ թէ բոլորն էլ Հայաստանցի են, թէ բոլորի շահերը նոյնն են, թէ ճնշումը, որ նրանց վրայ գործում է Թիւրքիան, հաւասարապէս ամէնքի վրայ է ծանրանում»***):

*) Վանի հայերի ազատամբան լուրի սուտ և պրօվակացիայի արդիւնք լինելն՝ «Մեղու» լրագիրը, իր ժամանակին, հրատարակել էր:

**) Նոյնը, եր. 181:

***) Նոյնը, եր. 182:

ԺԵ.

Անշուշտ ընթերցողին ցանկալի է իմանալ թէ՝ ուսու-տաճկական սահմանի վրայ գտնւած աննշան, փոքրիկ Իգգիլի քաղաքը, ուր «Մշակը» իր յատուկ թղթակիցն էր պահում, սովքեր էին, որ սուտ ու գրգռիչ լուրեր էին թխում, հնարում և հեռագիրներով ու թղթակցութիւններով արար աշխարհ տարածում:

Դրանք, — Իգգիլիի այդ գործիչները, սիրելի ընթերցող, Կովկասահայ մի քանի «տղերք» էին, որոնք գործում էին Թիֆլիզում կազմւած մի կենտրոնական կոմիտէի հրահանգով: Այդ կոմիտէտը, ինչպէս Իգգիլիում, նմանապէս և Կովկասի և Անդրկովկասի գաւառական փոքր իշխանէ յայտնի քաղաքներում, ունէր իր ենթակոմիտէները:

Թէ Թիֆլիզի կենտրոնական և թէ գաւառների երկրորդական այդ կոմիտէի կազմութեան մասին ես բաւականին տեղեկութիւններ տւել եմ իր ժամանակին*): Այստեղ այսքանը միայն կասեմ, որ այդ կոմիտէաներն էին, որ Կովկասից զինեալ խմբեր էին ուղարկում Տաճկահայաստան**):

Եւ այդ խմբերն էին, որ սահմանապահ

*) Տես իմ «Մտորոյթներ» գրքոյկը, նոյնպէս և «Լուծայ» 1906, № 4. նմանապէս և «Իմ շնորհաւորանքը «Մշակի» յօրեկանին» յօդուածը, «Հովիտ», 1913 թ., № 13:

**) Լինչ՝ Арменія II, եր. 556:

ուսւ գինւորների բարեհաճ թոյլտուութեամբ Տաճկահայաստան մանելով այնտեղ, — գրում է «Մշակի» Վանի թղթակիցը, — «գաւառներում գաղանի յեղափոխական ընկերակցութիւններ էին կազմում ինքնապաշտպանութեան համար»*) գրանք, այդ գինւած խմբերն էին նմանապէս, որ ասորա-հայկական քրդական դաշնակցութեան ծրագիր էին կազմում ոչ թէ ինքնապաշտպանութեան համար**), այլ յարձակման համար:

Բայց մինչդեռ Կովկասահայ գինւած խմբերն իրենց ինքնապաշտպանման և յարձակման ընկերակցութիւններն ու Դաշնակցութեան ծրագիրն կազմելովն էին զբաղւած և ահա Շէյխ Իբրաղուլայի առաջնորդութեամբ՝ 20 հազարանոց քրդական մի բանակ, Մարտինի հրացանով գինւած, հայերի վրայ յարձակւեցաւ և 170, — կարգն հարիւր եօթանասուն, — տաճկահայ և պարսկահայ զիւղեր քարուքանդ արաւ, հող ու մոխիր դարձրեց, ի հարկէ իրենց բնակիչներով, որոնցից մի մասը հազիւ-հազ իր հոգին ազատեց մի կերպ ուսաց հողին ապաւինելով:

ԺԶ.

Շէյխ Իբրաղուլայի արշաւանքը հայ զիւղե-

*) Նոյնը, Էր. 194.

**) Այդ խմբերի ձեռքով Տաճկահայաստանում կազմւած կազմակերպութիւնների մասին եւ մանրամասն տեղեկութիւն կտամ իմ ընթերցողին՝ քիչ յետոյ:

րի վրայ, — գրում է Լէօն, — «կազմակերպւել է թիւրքիայում՝ յատկապէս սպառնանք Եւրոպայի դէմ հայոց հարցի առիթով*):

Մի կողմ թողնելով այն հարցը՝ թէ Իբրաղուլայի արշաւանքը արդեօք Բ. Դուռը միայնակ էր կազմակերպել, թէ գուցէ սրա կամ նրա աջակցութեամբ, — եւ այստեղ պէտք է շեշտեմ, որ յիշեալ արշաւանքը կովկասահայ գինւած խմբերի կազմակերպողներն, — ինչպէս ասում են, խելքի չբերին: Այլ նրանք վճռեցին անպատճառ վրէժխնդիր լինել Օսմանեան կառավարութեանը՝ «խթանին աքացելով», կամ ըստ ժողովրդական ասացուածին՝ «ճակատով պատը քանդելով»:

Կովկասահայ կօմիտէները՝ յեղափոխական կուսակցութիւններ կազմակերպեցին բացարձակ կերպով: Նախ «Հնչակեանները» 1887-ին, ապա «Դաշնակցականները» 1890-ին: Սրանք որոշեցին Եւրոպայի ուշադրութիւնը բռնադատել յայտարարութիւններով, կոչերով, միտինգներով, մամուլի պայքարներով, ապստամբական ցոյցերով Տաճկահայաստանում, որպէսզի եւրոպական պետութիւնները և Սուլթանը հարկադրուած լինին Բերլինի դաշնագրի 61-րդ յօդւածը զործադրել:

Բայց որքան աւելի յանդուգն եղան հայ յեղափոխական կազմակերպութիւններն՝ այնքան

*) Լէօ՝ Արծր. Գ. Էր. 189:

աւելի Սուլթանի զայրոյթը սաստկացաւ իրենց դէմ, և այնքան աւելի առիթ ունեցաւ արդարանալ Անգլիայի առաջ՝ թէ բարենորոգումների գործը չի կարող յառաջ տանել՝ հայ յեղափոխական շարժումների և խռովութիւնների պատճառաւ։ Իսկ այդ շարժումներին և խռովութիւններին վերջ դնելու համար՝ Բ. Դուռը թէ մահմեդական տարրերից, — չէրքեզներից, քրդերից, լազերից, — և թէ Բուլղարիայի իսլամ տարրերից՝ մեծ բազմութիւն հրաւիրեց Հայաստան «Հայկական խնդիրը լուծելու՝ հայերը ոչնչացնելով»։

ԺԷ.

Հայերի «ոչնչացումը» գլուխ բերելու համար՝ Սուլթանը նախ փորձեց կրօնափոխ անել նրանց և քիւրդերը 1892 և 1893 թւականների ընթացքում հազարաւոր հայերի թլպատեցին...

Դառնալով Սուլթանին՝ պէտք է նկատել, որ նա հայերին իսլամացնելն բաւական չհամարեց, այլ նաև հայերին իրենց հայրենիքից դուրս գալու, — արտագաղթելու համար՝ այլևայլ հնարներ հնարեց և դիւրութիւններ մատակարարեց։ Եւ ի շնորհս այդ հնարների և դիւրութիւնների «բաղմամբիւ հայեր ձգեցին հեռացան իրենց երկրից»։

Հայերի «ոչնչացման» համար՝ Սուլթանի այս առաջին միջոցները աւելի ևս մեծցուցին յեղափոխական կոմիտէներուն զօրութիւնը և զանոնք ծայրայեղութիւններու մղեցին, ինչ որ թոյլ

պիտի տար Սուլթանին, որ ուրիշ մեթոդ մը գործադրէր»։

«Արդէն, — շարունակում է պատմիչը, — 1890 փետրւար 26-ին, հրաման րրած էր խուզարկել հայ եկեղեցիները և փնտռել զէնք ու ռազմամթերք, որ կրնային պահուած ըլլալ։ Բան մը չգտնուեցաւ։ Որովհետև հայերը ընդդիմացած էին այս սրբապղծութեան, անոնցմէ 20 սպանուած և աւելի քան 3000 վիրաւորուած էին»։

«Բայց մեծ կոտորածներու քաղաքականութիւնը 1894-էն ևեթ կը սկսի»։

«1894 Օգոստոսի 12-էն մինչև սեպտեմբերի 4-ը Սասունի գաւառի հայ գիւղերը՝ Դալուրիկ, Շէնիք, Սէւալ, Կէլիկուզան, Ազալի, Սպազանք և ուրիշները հուրի և սուրի մատնուեցան՝ Համիտիէներն ու քիւրդերը կը մտնեն գիւղերը, կը բռնագրւին տունները կը կողոպտեն ու կը սպանեն»։

Այն հայերը, որ չեն պաշտպաներ ինքզինքնին և որ դանձի գթութիւնը կը հայցեն, կը գործածեն փոսեր փորելու, անոնց մէջ նետուելու համար ինքզինքնին պաշտպանողները։ Ետ որոյ, իրենք ալ անոնց մէջ պիտի նետուին։ Արիւնը կը գինովցնէ մարդասպանները, անգթութեան անլուր հրբութիւններ կը երևակայեն, քահանաներ ողջ ողջ կը մորթագերծւին, կիներ փորապատառ կըլլան, մանկամարդ աղջիկներ կը բռնաբարւին, տղաքներ երկու կտոր կըլլան, շատ անգամ իրենց հօրը կամ մօրը ծունկին վրայ։ Երեսուն

գիւղ աւերւեցաւ, 7—8 հազար մարդ մեռաւ*): 400 մանկամարդ կիներ առեանգլած էին: Սասունը աւերակոյտ մըն էր այլ ևս**):

ԺԸ.

Մի այլ պատմիչ***) հետեւեալ մանրամասնութիւնները մէջ է մտնում:

200—400 կանանց—առում է նա,—գինւորներին յանձնեցին, որ նախ լկեցին, ապա սրախողխող արին (եր. 5):

Կենդրանց գիւղի քրդերը՝ միմեանց հետ խօսք կապելով՝ 5 տարեկանից սկսած բոլոր իգական սեռի ներկայացուցիչներին առեանգեցին (եր. 5):

Մի այլ գիւղում 60 ջահել կանանց եկեղեցում փակեցին, լկեցին և յետոյ մորթոտեցին, այնպէս որ եկեղեցւոյ դռնից արիւնը աղբիւրի նման հոսում էր (եր. 6):

Մի յղի կնոջ բռնելով հարցրին թէ՛ արգանդումը տղայ է թէ՛ աղջիկ: Երբ կինը չպատասխանեց՝ ստուգելու համար փորը ճղեցին (եր. 6): Մի ուրիշ գիւղում քրդերը վէճի բռնւեցան թէ՛ կարելի է արդեօք սրի մի հարւածով 4 մանուկները

*) Ծանօթ. ամերիկացի Գրինը՝ աւերւած գիւղերի թիւը հաշուում է 40, իսկ սպանւածների թիւը 16,000 եր. 57:

**) Արևելեան խնդ. եր. 398. և և Գրին. «Թիւրքերի գաղանթութիւնները» եր. 50:

***) Գէորգ Բրանդէս. «Հայկական հարց» կոչւած դասախօսութիւնը Բերլինում:

վիզը կտրել: Փորձեցին և յաջողեցան (եր. 6):

Ածօ կեղծ անունով հայ յեղափոխականին շարաշար ստիպեցին ընկերների անունը տալ: Իսկ երբ նա մերժեց՝ սկսեցին տանջանքների ենթարկել: Մի ամբողջ գիշեր ապտակելով և կտտելով անցուցին. յետոյ սկսեցին փայտով ծեծել. յետոյ մերկացրին և երկու գերանների վրայ պառկեցնելով՝ սկսեցին հարւածել. յետոյ սկսեցին ունելիքով մօրուքի մագերը փետել. յետոյ տաքացրած երկաթով սկսեցին դաղել ձեռքերը, երեսը և մարմնոյ միւս մասերը (եր. 8):

Սպահանք գիւղում՝ քրդերը իրենց սուրիների և թուրերի ծայրերով մանուկներին օդն էին բարձրացնում, իսկ մայրերին մերկացնելով՝ պղծում և յետոյ սպանում:

50 ջահիլ կանայք՝ ամօթից ստիպուած՝ իրենք իրենց անդունդը ձգեցին և ջարդ ու փշուր եղան (եր. 18):

Մի այլ գիւղում 20 ջահիլ կանայք՝ իրենք իրենց եփրատ գետը նետեցին և խեղդւեցան (եր. 18) և այլն, և այլն:

ԺԹ.

Եւրոպական կառավարութիւնները միջամտեցին:

Անգլիան պահանջեց մի քննիչ յանձնաժողով կազմել տեղի ունեցած կոտորածների հեղինակներին գտնելու և պատժելու համար:

Բ. Դուռը կանխեց և 1894 թ. նոյեմբերի 20-ին մի յանձնաժողով կազմեց, որին միացան մի-մի ներկայացուցիչներ Անգլիայի, Ֆրանսիայի և Ռուսաստանի կողմից: Գերմանիան և Աւստրիան աւելորդ համարեցին իրենց կողմից ևս առանձին ներկայացուցիչ ունենալու:

Նրանք վստահ էին Ֆրանսիայի, նամանաւանդ Ռուսաստանի վրայ, որի շահերի հետ անմիջական կապ ունէր հայկական հարցը:

Զնայած բազմաթիւ և բազմատեսակ խոչնդոտներին, — այնուամենայնիւ քննիչ յանձնաժողովը հաստատեց, որ ջարդերը կատարւած են կանոնաւոր զօրքերի ձեռքով և իրենց պետերի հրամանաւ:

Այդ պատճառաւ Բաղէշի վալին, Պահրի-փաշան պաշտօնանկ եղաւ*):

Հէնց այսքանով էլ Եւրոպան բաւականացաւ, չկամենալով աւելի խորերը գնալու...

Եւ որպէսզի նմանօրինակ դէպքեր չկրկնւին, — մեծ տէրութիւնների Կ. Պօլսոյ ղեսպաններն մշակեցին և 1895 մայիսի 11-ին Բ. Դուռը ներկայացրին մի յիշատակարան — մեմորանդում, որ այլևայլ բարեկարգչական կէտեր էր պարունակում: Կէտերից էականները սրանք են.

*) Յետոյ Սուլթանը նրան «Իմթիազ» պատուանշանը տուեց: Իսկ Զեքի-փաշան, որ ջարդարար զօրքի առաջնորդն էր՝ ոչ միայն անպատիժ մնաց, այլ նաև «Իմթիազի ժապաւէնը» և «ոսկեայ շքադրամ» ստացաւ:

1. Վալիների ընտրութիւնը մեծ տէրութիւնների գիտութեամբ լինի:

2. Տուրքերի տեսակն ու քանակը որոշւած լինին: Եւ նրանք կանոնաւորապէս գանձւին:

3. Ոստիկան-զինւորներն ժողովրդի ամեն դասակարգերիցն էլ առնւին:

4. Քիւրդերի կայքերի և արօտատեղիներ սահմանները ճշտւին ու որոշւին և նրանց չվումների վրայ հսկողութիւն լինի*):

Ի.

Այս յիշատակագրի առթիւ Լաբանովը՝ Պետրօգրադում անգլիական ղեսպանին յայտնեց, թէ «բարենոգումների ծրագիրը նա — Լաբանովը — ամենեկին վերջնական չէ համարում: Եւ եթէ Սուլթանը այդ ծրագիրը չընդունեց, կամ եթէ իր կողմից նոր ծրագիր առաջարկեց, — ղեսպանները իրաւունք չպիտի ունենան սպառնալու: Ռուսաստանը երբէք չպիտի համաձայնի Բ. Դուռն վրայ որեւէ ճնշում գործելու»**):

Լաբանովի գուշակութիւնը կատարւեցաւ:

Յունիսի 3-ին Բ. Դուռը ղեսպաններին իր ծրագիրը առաջարկեց, որի ընթերցանութիւնից յետոյ՝ Ֆրանսիական ղեսպանը — Պօլկամբօն բացականչեց, թէ Բ. Դուռն ծրագիրը խորհրդածութեան կամ վիճաբանութեան հիմք անգամ չէ

*) Մակկօն, հր. 399.

**) Նոյնը, հր. 269.

ներկայացնում, այլ ամբողջովին մերժում է դեպ-
պաններին ծրագրերը, պատրուակելով, որ եւրոպա-
կան ամեն մի հսկողութիւն կամ հակակշիռ պի-
տի վնասէ Սուլթանի վեհապետական իրաւունքը:

Ֆրանսիական դեսպանի այդ նկատողութիւ-
նը որքան էլ որ իրաւացի էր, — այնուամենայնիւ
նրա կօլլէգները գտան, որ վիճաբանութեան
որոշ հիմքեր կան Բ. Դուան առաջարկած ծրա-
գրի մէջ: Եւ համբերատարութեամբ ձեռ-
նարկեցին այդ հիմքերի քննութեանը, յու-
սալով, որ թերեւ կարողանան Սուլթանի յա-
մառութիւնը կոտորել առանց նրան վիրաւորած
լինելու:

Սակայն դեսպանների համբերութիւնը չու-
նեցան հայ յեղափոխականները:

1895 սեպտեմբերի 25-ին նրանք դեսպան-
ներին գեկուցին, թէ Պօլսոյ մէջ մի խաղաղ
ցոյց պիտի անեն ստիպելու նրանց — դեսպան-
ներին արագութեամբ գործելու, եւ և քրիստո
նեայ ժողովրդոց մէջ «խաչակրութեան ոգին
զարթեցնելու»:

Այսպէս կարծում է եւրոպացի պատմիչը,
սակայն ցոյցի հեղինակների նպատակը այդքան
միակողմանի չէր: Այլ նրանք ցոյցը Կ. Պօլսում
կազմեցին հետեւեալ դիտումներով.

1. «Հայաստանի մէջ պատահած կոտորած
մը եթէ Պօլսոյ մէջ հրապարակային բողոքի և
զայրոյթի տեղի չտայ՝ Հայաստանցիները կը
վհատեն, տեսնելով, որ իրենց վրայ մտածող ու

կարեկցող չկայ և բոլորովին անյոյս ու անօգ-
նական թողւած են իրենց բարբարոս հարստա-
հարիչներուն ձեռքը: Այս աննպաստ զաղափա-
րին ձուլումը յեղափոխական նորածագ ոգիին
ձուլման դէմ մեծ արգելք մը պիտի հանդիսա-
նար. ցոյցը յարմար կը համարէր Պօլսոյ մէջ,
քանի որ հայերու մտաւոր, բարոյական և ազ-
գային գլխաւոր կենդրոն մը կը նկատուէր»:

2. «Հայաստանի մէջ կատարւած կոտորած
մը կրնար Եւրոպայի աչքէն վրիպել, կամ տար-
բեր գոյնով ներկայացուիլ անոր, կամ դարձեալ
Եւրոպական շահերուն հետ այնչափ մեծ առն-
չութիւն չունենալով՝ անտարբերութեամբ դի-
տուիլ Եւրոպայի մէջ: Եւրոպական դեսպան-
ներուն աչքին առջև յառաջ եկած ուժգին բո-
ղոք մը աւելի կը նպաստէր Եւրոպայի ուշա-
դրութիւնը հրաւիրելու երկրին կացութեան վը-
րայ. միջազգային շահերու հանդէպ Կ. Պօլսոյ
բացառիկ կարեւորութիւնը անծանօթ չէր ոչ
ոքի»:

3. «Եթէ հայկական յուզումը սահմանա-
փակուած մնար միմիայն Հայաստանի մէջ, գըլ-
խաւորաբար Ռուսիոյ ուշադրութեան արժանի
պիտի չլլար, աւելի մօտիկէն շօշափելով անոր
շահերը իբրեւ սահմանակից պետութիւն և կրնար
անոր պատրուակ մը ընծայել օրին մէկը յան-
կարձ գրաւելու Հայաստանը, մինչդեռ շարժու-
մը տարածւելով Հայաստանէն դուրս, Թիւրքիոյ
միւս կողմերը և մասնաւորապէս մայրաքաղա-

քին մէջ, միւս մեծ պետութիւններուն ալ ուշադրութիւնը կը դարձնէր Հայկական խնդրին վրայ, մասնաւորապէս Մնգլիսի, զոր կը նկատէինք մեր դատին աւելի համակիր, քան Ռուսիան: Հայկական խնդիրը պետութեանց միջև խնդիր մը դարձնելը աւելի նպաստաւոր կերեւէր մեր ազգային շահերուն»:

4. «Մեր ազգին ցրուած վիճակը և մայր երկրին մէջ բազմաթիւ օտար ցեղերու խառն բնակութիւնը կրնային անյաջողութեան մատնել մայր երկրին մէջ կատարուելիք հայկական շարժում մը: Հայութեան այս բացառիկ վիճակն ալ կը պահանջէր, որ հայկական շարժումը Հայաստանի սահմաններէն դուրս կատարուէր. այդ պարագային Պօլիսը կարելի չէր անտես ընել, ուր 200,000 աւելի հայեր կը բնակէին, պանդուխտներով միասին»:

5. «Զարիքին ազբիւրը Պօլիս ըլլալով՝ յայտնի կը նշմարւէր, նպատակայարմար կը գտնէինք, որ առաջին բողոքն ալ պէտք էր ըլլալ Պօլսոյ մէջ, նոյն ինքն պալատին քիւն տակ»:

6. «Հինգ-վեց դարերէ ի վեր գերութեան մէջ հեծող և մասամբ ստրկացած ժողովրդի մը մէջ, երբ հանգամանքներու բերմամբ ոգևորութիւն և յեղափոխական տրամադրութիւն կը ծագի, յեղափոխականները պարտական են օգտուել այդ հանգամանքէն ու ոգևորութենէն յեղափոխութեան ոգին աւելի հաստատ, աւելի

գիտակցական ու գործնական դարձնելու և ընդհանրացնելու ժողովրդին խաւերուն մէջ. և յեղափոխական զաղափարը ծաւալելու ամենէն արդիւնաւոր ու ազդեցիկ միջոցը յեղափոխական գործունէութիւնն է»:

7. «Երբ թիւրք կառավարութիւնը և թիւրք ժողովուրդը տեսնէին մի անգամ հայերուն մէջ տիրող համերաշխութիւնը և համոզւէին թէ Հայաստանի մէջ իրենց կողմէ տրւած հարւածը՝ անպատճառ կրնայ ունենալ իր հակահարւածը ուրիշ տեղ մը, և մանաւանդ այդ ուրիշ տեղը ըլլար Կ. Պօլիս, միջազգային շահերու այդ խիտ կենդրոնը, կը ենթադրէր աւելի զգուշաւոր քաղաքականութեան մը կը հետեւն և չեն համարձակէր նոր կոտորածներ կազմակերպել երկրին մէջ»^{*)}:

Այժմ անցնենք ցոյցի նկարագրութեանը:

ԻԱ.

Այն ցոյցը, որ Գում-Գաբուի ցոյց է կոչուում, կազմեց Հնչակեան կուսակցութիւնը: Յուցարարների մէջ ամենաեռանդուն գործունէութիւն ցոյց տւին, ուղղակի մահն իրենց աչքն առնելով, կուսակցութեան երկու անդամները՝ Համբարձում Պօյաճեան (Մուրադ կեղծան-

*) Յ. Կ. Ճանկիւլեան՝ «Յիշատակներ Հայկական ճգնաժամէն», եր. 9—11:

ւամբ) և Յարութիւն Ճանկիւլեան (Կայծիկ կեղծանւամբ):

Ուստի նախ քան Գում-Գաբուի ցոյցի նկարագրին անցնելու՝ անհրաժեշտ եմ համարում մի համառօտ տեղեկութիւն տալ ընթերցողին Տաճկահայաստանում կազմակերպուած յեղափոխականութեան մասին, ինչպէս նախընթաց ծանօթութիւններէցս մէկում խոստացել էի:

Կանոնաւոր յեղափոխական շարժումներն Տաճկա-Հայաստանի մէջ սկսեցին Ս. Ստեփանօյի դաշնադրութիւնից անմիջապէս յետոյ:

Պատերազմի ժամանակ՝ քրդերի ձեռքով հայ ժողովրդի վրայ այստեղ ու այնտեղ կատարուած վայրագութիւնների վրէժը լուծելու համար՝ մի քանի հարիւր կովկասահայ զինուած հայ երիտասարդներ՝ ռուս-տաճկական սահմանադիրի վրայ գտնուած Իգգիր քաղաքից Տաճկա-Հայաստան մտան*):

Նրանցից 9 հոգի մի քահանայի հետ Վան գնացին և տեղւոյն երիտասարդութեան օգնութեամբ՝ «Սև խաչ» անուան տակ գաղտնի մի կազմակերպութիւն հիմնեցին:

Վանի տեղական երիտասարդութիւնը, — գրում է պատմիչը. — «Իսկոյն և եթ ընդգրկեց Յեղափոխութեան մեծ գաղափարը, որ բովանդակ թիւրքահայոց մէջ առաջինն հանդիսացաւ»:

«Սև խաչ» մակդիրը կը նշանակէր կազմակերպութեան դաւաճան և անգաղտնապահ ընկե-

*) Լինչ՝ II, եր. 556.

րի անւան վրայ սև խաչ քաշելով, իսկոյն և եթ մահւան դատապարտել»:

«Սև խաչ»-ի նպատակն էր ժողովրդին մէջ ինքնապաշտպանութեան ոգին տարածել, իր իրաւանց տէր ընել և իբր մարդ ապրել»:

«Սև խաչը» ոգի ի բռին կաշխատէր իր անդամներուն թիւը շատցնել. արդէն գաղտնապահութեան պէտք եղած ուխտերն և երդումները տեղի կունենային, երբ արտասահմանէն (Ռուսաստանից) և Պոլսէն հետզհետէ կը հասնին բանախօսները» (пекторы):

ԻԲ.

«Կազմակերպութիւնն ունեցաւ իր քլիւպը, որուն մէջ շաբաթը քանի մը անգամ բանախօսութեանց ներկայ կը գտնւէին ռուսական և անգլիական ֆոխ-հիւպատոսներն ընտանեօք»:

«Քլիւպին մէջ կերգւէին հայկական ազատ երգեր: Բանախօսութեան շարքը դեռ շատ պիտի երկարէր, եթէ Մկրտիչ Փորթուգալեանի ցուցամոլ և անխոհեմ մէկ քայլը աչքի չգարնէր»:

«Շաբաթ և կիրակի երեկոյ բանախօսութիւն պիտի ըլլար քլիւպին մէջ, իսկ կիրակի ցերեկին Հայկազնեան դպրոցին մէջ: Քլիւպին բանախօսներն էին Պէյլերեան և Կովկասահայ Գալուստ: Իսկ Հայկազնեան դպրոցին բանախօսն էր Մկրտիչ Փորթուգալեան»:

«Փորթուգալեան իր բանախօսութեան յայտարարութեան մէկ օրինակն ալ փակցուցած էր նշանաւոր շուկայի մը պատը: Բանախօսութեան նիւթն էր՝ «Ժամանակը հասեր է, հայեր, ինչ ընենք»^{*)}: Վանի ընդհանուր դատախազ Թայիֆ Բէյ իր գրագիր Նշան Քանթարճեանի հետ «նշանաւոր» շուկայէն անցնելիս՝ տեսնում է Փորթուգալեանի յայտարարութիւնը, որի թարգմանութիւնը անում է գրագիր Նշանը:

Ուստի դատախազի կարգադրութեամբ՝ ոստիկանութիւնը դադարեցնում է ինչպէս քլիւպի, նոյնպէս և Հայկազնեան դպրոցի բանախօսութիւնները:

«Սե խաչը» երբ ստուգեց, որ Նշան Քանթարճեանի պատճառաւ բանախօսութիւնները դադարեցան, որոշեց Նշանին «տեռօռի ենթարկել»:

«Կազմակերպութիւնն փորձեց Նշանին իր տան մէջ սպանել, բայց ինչ-ինչ պատճառներով յարմար չտեսաւ: Ամենէն վերջի փորձն ու գործողութիւնը պիտի ըլլար «Զաղլի» փողոցին մէջ, բայց տէռօռիստը նկատի ունեցած էր թէ անպատճառ Նշանին հետ՝ անմեղ մը ևս պիտի սպանելի, չէր ուզած գործողութիւնը կատարել: Որովհետեւ Նշանը զղջացած էր և ուխտած, որ մասնութիւններ ալլա չի անիլ:

«Սե խաչը» աւելի կողկորուէր և կը յառաջադիմէր, — ասում է պատմիչը, — երբ ի նկատի

^{*)} Յիշատ. Հայկ. ճգնաժ., եր. 50 - 51:

կուսենար, որ իրեն կը համակրէ նաև ռուսական հիւպատոս նշանաւոր հայրենասէր Կոստանդին-Բէյ Կամսարական (այժմ ժենեռալ), իսկ անգլիական հիւպատոսին այնչափ հաճելի չէր թուեր կազմակերպութիւնը:

«Կամսարական-պէյին համակրութիւնը այնչափ որոշ և մէկին էր, որ նոյնիսկ կուսակալը գիտէր բոլոր անց ու դարձը, բայց իր խորամանկութեամբ առիթին կըսպասէր, որով իր մէկ մտերմին ըսած էր՝ «Եթէ Կամսարականն ու Խրիմեանը Վանէն հեռացնել տամ, այն ատեն է, որ հանգիստ խղճով Վանէն պիտի հեռանամ»:

«Վանայ երիտասարդութեան, — շարունակում է պատմիչը, որ նոյն ինքն տէռօռիստն է և «Յիշատակներ Հայկական ճգնաժամէն» գրքի հեղինակը, զարմանալի կը թւար ռուս հիւպատոսի մը համակրութիւնը, պաշտպանութիւնը և այդ տեսակ կազմակերպութեանը մը ոյժ տալը»:

«...Կովկասահայերէն Գալուստին և Պաղտասարին վիճակւած էր Գաւաշի կողմերն երթալ և հայ գիւղացիներին ինքնապաշտպանութեան պատրաստել»^{*)}:

ԻԳ.

Այնուհետև պ. Ճանկիւլեանը մանրամասնօրէն նկարագրում է, թէ ինչպէս «Սե խաչի»

^{*)} Նոյնը, եր. 51—53.

անդամներին երկու հոգի Ախթամար վանքն են մտել և իրենց հետ վերցրած բանալիներով կաթողիկոսարանի սնդուկը բացել, «ոսկիներ» յափշտակել թագնաբար և «ծովեզրեայ որոշ գիւղը մեկնել»*) :

Յետոյ նկարագրում է թէ ինչպէս «Սև խաչը» ձեռներէցութեամբ՝ 1882 թւին տաճկահայոց Ազգային Սահմանադրութեան 22-րդ տարեդարձի հանդէսը կատարեց Վանի հայ ժողովուրդը՝ Վարազայ վանքում, շրջապատւած 80 հոգի հեծեալ և հետեակ հայ զինուորներով, որոնք «բուն հայկական զինուորական հագուստներ էին հագած և որոնք Վարազից յետ դառնալիս խիստ համակրական ցոյցեր արին իւրիմեանի և Կոստանդին Կամսարականի տների հանդէպ»*) :

Մինչդեռ «Սև խաչը» Վանում էր գործում, համանման ուրիշ կազմակերպութիւններ էլ գործում էին Կարին, Բաղէշ, Սեբաստիա և Մուշ քաղաքներում :

Ուր ուրեմն մի կազմակերպութիւն էլ Կ. Պօլսում հիմնեցաւ :

Տաճկաստանի այս բոլոր հայ յեղափոխական, տարբեր-տարբեր անուններով, կազմակերպութիւնները առհասարակ «այն համոզումն ունէին, որ պիտի գայ ժամանակ մը, որ մենք (յեղափոխականները) հրահանգինք մեզմէ բար-

*) Նոյնը, եր. 54—57 :

*) Նոյնը, եր. 89—91 :

ձըր և կարող մարմինէ մը*), իսկ եթէ երբէք հակառակ պարագային այդ կարծեցեալ ոյժն երևան չելլէ, այն ատեն վայ է եկել հայ ազգին և ժողովրդին, որ իր յոյսը մեզ վրայ դրած է»**):

Այս «բարձր և կարող մարմինը» Մկրտիչ Թիւթիւնճիեվը չէր, որ Բուլղարիայից կարմիր թանաքով գրւած ութ թերթանի մի ծրագիր էր ուղարկել Սրիմեանին և գրում էր թէ՝ «Հայկական խնդիրը գիւտնագիտութեամբ կարելի չէ շահել և եթէ երբէք թիւրք կառավարութիւնը ուզէ իսկ 61-րդ յօդւածը գործադրել, այնչափ նպաստաւոր և օգտակար չի կրնար ըլլալ. այլ միակ և ամենէն նպատակայարմար միջոցն է յեղափոխութեամբ ձեռք բերել մեր ազատութիւնը» :

Մկրտիչ Թիւթիւնճիեվը աւելացնում էր, որ իր ծրագրով գալիս է ազգին ծառայութիւն անելու, որ ինքը միքանի գիւտնագէտ բարեկամներ ունի և նրանց հետ միշտ շփման մէջ լինելով՝ նրանց խորհրդովն էլ կազմել է իր ծրագիրը»***):

Մկրտիչ Թիւթիւնճեանի այս ծրագիրը Սրիմեանը յանձնեց Կ. Պօլսոյ կազմակերպութեանը : Վերջինս ժողով և խորհրդակցութիւն ունեցաւ և որոշեց անուշադիր թողնել Թիւ-

*) Թերևս տէրութենէ մը :

**) Նոյնը, եր. 128 :

***) Նոյնը, եր. 133—134 :

Թիւնճիեւի ծրագիրը, որովհետեւ խորհրդակցութեան ժամանակ յայտնեցաւ, որ Թէե թիւնճիեւը Բուլղարիայում յայտնի անձնաւորութիւն է, բայց նրա ազնւութեան մասին ոչ ոք կարող չէ երաշխաւորել*):

Բացի Տաճկաստանի կազմակերպութիւններից, մի այլ «գաղտնի կազմակերպութիւն էլ Մարսելիայում կար—«Հայոց հայրենասիրաց միութիւն»:

Այս միութեան նախագահը «Արմենիա» Թերթի խմբագիր՝ Մկրտիչ Փորթուգալեանն էր, որ իբրեւ իբ Թերթի բաժանորդագիր՝ շարունակ դրամ էր ստանում, նամանաւանդ Պօլսից, յօգուտ միութեանը: Դրամ ուղարկում էին ամեն դասակարգի մարզիկ, նոյնիսկ «համալ»—մշակ դասակարգը: Դրամահաւաքը մի օր, երբ սրանցից (մշակներից) մէկի մօտ եկաւ ամսականը ստանալու, մշակը դրամը վճարեց ասելով, որ հայրենիքից ստացած ծաղկաւոր գուլբայի զինն է, որ ինքը ծախել է,—դրամահաւաքը իսկոյն դրամը յետ դարձրեց, ասելով որ ուրիշ ժամանակ թող վճարէ, երբ ձեռքը աւելորդ դրամ կանցնի: Մշակը փողն յետ չստանալով ասաց՝ «աւելի լաւ է առանց գուլբայի մնամ և սուրբ դործին համար պարտքս վճարեմ»**):

Եթէ հաւատանք Ճանկիւլեանի դրածներին՝

*) Այս Թիւնճիեւիին Հնչակեանք տեւորի ենթարկեցին 1895 թ. յունիսի 24-ին Պօլսոյ մէջ:

**) Նոյնը, եր. 146.

այսպիսի միջոցներով հանգանակած գրառներն իրենց նախատակին չեն ծառայել, այլ Մկրտիչ Փորթուգալեանի որկորն են մտել:

Որովհետեւ Կ. Պօլսոյ կազմակերպութեան կողմից Մարսելիա գնացող քննիչներն երևան են հանել, որ «Հայոց հայրենասիրաց միութիւն» կոչւած կազմակերպութիւն բնաւ գոյութիւն չէ ունեցել: Եւ այդ երեակայական միութեան նախագահն էլ, վարչութեան 5 անդամն էլ, քարտուղարն էլ՝ ինքը, Մկրտիչ Փորթուգալեանն է եղել սոսկ*):

Այս տխուր փաստը երևան հանողը եղաւ մեր պատմիչ Ճանկիւլեանը, Վանի «Սե խաչի» տեւօրիստը, որ վերջին տարիներում Կ. Պօլս փոխադրելով՝ մեծ աշխատանք թափած էր նախ՝ աշխտեղի կազմակերպութեան հզօրացմանը և ապա նրա միացմանը Հնչակեան կազմակերպութեան հետ, որով այս վերջինը ուժեղանալով՝ ձեռնարկեց և գլուխ բերեց Գում-Գաւուի ցոյցը, որի նկարագրութեանը ես դառնում եմ այժմ:

ԻԴ.

1890 թ. յուլիսի 12-ին կայացած խորհրդակցութեան ժամանակ՝ կազմակերպութիւնը որոշեց ցոյցը կատարել յուլիսի 15-ին, կիրակի, օրը, տաճիկների Կուրբան Բայրամի կոչւած տօնի առաջին օրը:

*) Նոյնը, եր. 145.

Միքանի հարիւր օրինակ պահանջագիր էին պատրաստած՝ ձեռագիր:

Այդ պահանջագրի օրինակները՝ կազմակերպութեան տասնապետները, յիսնապետներն ու հարիւրապետները ցոյցի ժամանակ պէտք է ցրէին ցուցարար ժողովրդին:

Մի օրինակը Ճանկիւլեանը (Կայծակ) պատարագի միջոցին, «Առաքելոցի» ժամանակ, մայր եկեղեցու սեղանից պիտի կարդար ի լուր աղօթաւոր ժողովրդին:

Իսկ միւս օրինակը՝ Համբարձում Պօյաճեանը (Մուրատ) Աշգեան պատրիարքի հետ՝ ցուցարարների առաջն ընկած՝ պէտք է պալատ տանէին և սուլթանին մատուցանէին:

Յուլիսի 15-ին, նշանակեալ ժամին ցուցարար բազմութիւնը տասնապետների, յիսնապետների և հարիւրապետների առաջնորդութեամբ՝ հաւաքեցան մայր եկեղեցու և պատրիարքարանի շուրջը:

Յուլիսի 12-ի խորհրդակցութեան ժամանակ որոշւած էր, որ կազմակերպութեան ռուսահպատակ անդամներն*) ցոյցին չմասնակցեն: Որպէսզի ձերբակալման դէպքում ռուսահպատակների մասնակցութիւնը չյայտնուի:

Խորհրդակցութեան օրից սկսեալ՝ մինչև ցոյցի վերջնաւն Պօլսոյ ոստիկանութիւնը, երբեմն ծալտեալ և երբեմն յայտնի կերպով, հրա-

*) Դրանք որովհետև կենդանի են, ուստի մենք նրանց անունը չենք տալ:

կում ու հետևում է կազմակերպութեան ամեն մի գործունէութեան վրայ:

Յոյցի օրը մանաւանդ աչքի էր ընկնում ծալտեալ ոստիկանների ներկայութիւնը:

Կայծիկն ու Մուրադը՝ երկիւղ կրելով մի գուցէ ոստիկանութիւնը յաջողի խաբանել ցոյցը, — որոշեցին չսպասել «Առաքելոցին», այլ «Փառքի բարձունս»-ի ժամանակ սկսել իրենց դործը*): Ուստի երկուսով գնացին աջակողմեան դասը կանգնեցան:

Երբ պատրիարքն ու հոգևորական դասը՝ բեմի առաջ գալով սկսեցին երգել՝ «անմիջապէս սեղան ցառկեցի, — ասում է Ճանկիւլեանը, — և սկսայ պահանջագիրը կարդալ: Դպիրները միայն «Փառք»... կրցան ըսել ու ժամերգութիւնն ընդհատեցաւ»:

Ի՛նչ.

«Պահանջագրին ընթերցումը, — շարունակում է պատմիչ-յեղավորականը, — դեռ չվերջացած՝ ետևէս ձեռք մը յափշտակեց թուղթը, ետիս դարձայ, լուսարարապէս Տէր-Սուքիաս քահանան տեսայ, որ խաչկալին ետն փախաւ. իսկոյն վեցհարւածեանս հանելով ետևէս վազե-

*) Որպէսզի ցոյցի պատճառաւ Հայաստանում ջարդ առաջացնելու հնարաւորութիւն չունենայ կառավարութիւնը, կազմակերպութիւնը՝ Տեղիկցի Թորոս Միլքոնեան տասնապետի միջոցաւ՝ Անատոլիայի հեռագրաթիւրը կտրել էր շաբաթ գիշերը:

ցի, բայց խաչկալին ետևի դուռը դոց գտայ:

«Արդէն պահանջադիրը ժողովրդին մէջ ցրւած էր, հարկ չկար պակաս մնացածը կարգալու:

«Մուրառ և Աշգեան չկային մէջտեղ: Կարծելով թէ Մուրազ արդէն Աշգեանը առած տարած է, ուզեցի եկեղեցիէն դուրս ելնել: Այդ պահուն մեր ընկերներէն միայն հարցուցի թէ Աշգեան պատրիարքարանն է թէ Մուրատին հետ գնացին. քովերնիս գտնուող պատանի մը ըսաւ Աշգեան փախաւ, հոս մտաւ (խորանը ցոյց տալով): Իսկոյն դուռը բացի, ներս նայեցայ, հոն չտեսայ. պիտի վերադառնայի, յանկարծ ականջիս երկաթի շխբոցի ձայն մը հասաւ: Անմիջապէս կրկին ներս մտայ: Աշգեան պարտէզը հանող դրան ետևին կծկտած երկաթի կտորով մը կաշխատէր փականքը բանալ, պարտէզ ելնելու համար:

«Ի՞նչ կնես, պոռացի. սարսափեցաւ, խուսկոյն ոտներուս փաթթեցաւ և պաղատական ձևով մը ըսաւ—«Ի սէր Աստուծոյ՝ կեանքս խնայէ, մեղք եմ»:

Ինչպէս կերևէր, ձեռքս գտնւած ատրճանակն էր, որ զինքը կը սարսափեցնէր: Մօրուքէն բռնելով ոտքի հանեցի և ըսի.

«Շուտ հետևէ ինձի»:

«Ա՛խ, անկարելի է, չեմ կրնար պալատ երթալ, ի սէր կարգիս՝ խնայեցէք ինձի»:

«Աշգեանի թևէն բռնած կը քաշէի և ինքը

կրնդդիմանար: Ուրեմն կեցիր քեզ սպանեմ, ըսելով ատրճանակս դէպի զինքն ուղղեցի օդին մէջ պարպելով: Աշգեան գետին փռւած էր: Բայց կարելի չէր, պէտք էր հետևէր:

Ս. Յարութիւն եկեղեցիէն դեռ նոր դուրս ելած էինք: Յանկարծ մայր եկեղեցու հըշէջներու խումբը մեր վրայ խուժեց և Աշգեանը ձեռքէս առնելով՝ սկսան զիս գանակոծել զաւազանով և բիրով: «Սխալ էք, սխալ էք» ըսելս կարևորութիւն չունէր. խօսքիս մօտիկ չէին ընել, այլ շարունակ կը հարւածէին: Ի՞նչ կարող էի ընել այդ հուժկու հըշէջներուն. անհնար էր անոնց ձեռքէն ազատիլ. արդէն զլխէս, ճակտէս ու ձեռքէս վիրաւորւած էի և արիւն կը հոսէր ու ատամներէս երկուքը կտորած էին: Մտածեցի մեռնել կեղծեմ, որպէսզի կարենամ ձեռքներէն ազատիլ, աչքերս գոցելով նւաղելու ձև մը առի՝ վիզս ծռած դալկահար: «Ա՛լ մի՛ ծեծէք, մեռաւ, լմացաւ» պոռացին: Իսկոյն ծեծելէ դադրեցան և սկսան ետ քաշւիլ. իբր անշնչացած դիակ մը գետնին փռւեցայ և հըշէջները ցրւեցան: Ատրճանակս, զաշոյնս, փամփուշտներս ու ժամացոյցս տարած էին: Բնականաբար ժողովուրդը շուրջս պիտի խոնէր տեսնելու թէ ո՞վ է մեռնողը: Երեսիս վրայ գետնին փռւած էի: Անգամ մը աչքս բացի տեսայ, որ մեր Սեբաստացի Յովակիմ տասնապետն զլիուս քով նստած է. գիտէի, որ ինքը ատրճանակ ունի: «Շուտով ատրճանակդ տուր ինձի» ըսելով ոտքի ելայ:

Իսկ երբ կուգէի մայր եկեղեցիէն դէպի պատրիարքարան երթալ, լուսարար Յովհաննէս բարձր ձայնով պոռայ. «Մուտ է, մեռած չէ եղեր, նորէն եկաւ, փախէք»:

Սկսած ժամերգութիւնը նորէն ընդհատեցաւ: Քահանաները և դպիրները զիս տեսնելուն պէս միւս դասը խուժեցին: Յովակիմը տռաջս ընկած՝ «ճամբայ բացէք» կը պոռար: Ո՛վ կըրնար ճամբայ չբանալ, չէ՞ որ լուսարարին արձակած բացականչութիւններէն ամենքն ալ սարսափով լեցած էին:

«Եկեղեցիին մէջ դէմս ելաւ Երուսաղէմի փոխանորդ Սիմէօն Եպիսկոպոս: Չեռքն ունեցած հաստ բիրն (գաւազանն) ուզեց գլխուս իջեցնել՝ «դժն ես այս ամենը ընողն» ասելով: Անմիջական շարժումովս իր բիրը բոլորովին պարապը դնաց, փոխանակ գլխուս գալու: Աւերձակիս բռնով վեղարը լաւ մը գլխուն իջեցուցի և կից մը (քացի) տալով գետին տապալեցի զինքը ու մեղք է, գնդակիս ըսելով՝ ճամբաս շարունակեցի դէպի պատրիարքարան»*):

ԻԶ.

«Մայր եկեղեցիին զանգակներու անընդհատ դողանջումն, — շարունակում է ինքնակենսագիր յեղափոխականը, — այնչափ ժողովուրդ՝ պատանի, երիտասարդ, ծեր, կին ու աղջիկ լեցւած էր, որ գաւթին փողոցն ու պատրիարքա-

*) Նոյնը՝ եր. 26—28.

րանի անցքին մէջ ճամբայ գտնել դժար էր, եթէ Յովակիմի և իմ բարձրակոչ «ճամբայ բացէք» բացականչութիւնը չըլլար:

«Վազած արիւնը լւացւելէ և կարելի եղածին չափ մաքրւելէ վերջը Մուրատը գտայ, որ չէր յաջողած Աշգեանը համոզել և պալատ տանել:

«Երկուքով միասին Աշգեանին քով դնացինք: Աշգեան զիս տեսնելուն պէս ուշաթափ ինկաւ, բարապաններ երեսին քիչ մը շուր սրսկելէ վերջ սթափեցաւ:

«Աշգեան չէր համոզւէր և մինչև վերջը իր յամառութեան վրայ կըրցած կուգէր մեզ համոզել, թէ միւս օրը շնորհակալութեան առթիւ պալատ երթալու ժամանակ մեր պահանջադիրը Սուլթանին անձամբ պիտի ներկայացնէր:

«Աշգեանի այս տեսակ խաբուսիկ և խուսափողական խօսքերը մեզ կը գրգռէին և աւելի կը զայրացնէին, ինձի ընկերանալու և պալատ երթալու բնաւ դիտաւորութիւն չունենալը՝ արիւնիս գլուխնիս ցատկեցնել կուտար:

«Քանի մը վայրկեան վերջ՝ կրկին Աշգեանին մօտ զրկեցի Մուրատը. նորէն ապարդիւն:

«Աշգեանի սենեակին դուռնի վրայ մեր զինւած երկու ընկերներէն կեցուցած էինք իբր պահապան, որ առանց Մուրատի և իմ արտօնութեան ոչ ոք ներս չպիտի մտնէր: Պատրիարքարանի փողոցի դուռնի վրայ չորս ընկերներ և սանդուխի ստորոտներուն քով նորէն ընկերներ կեցած էին և հրահանգւած էին կառ-

ու փշուր արի...: Գլուխ գործոց ըլլալով, Մուսայի նման արիւնկազակ ոճրագործ մը «անպատիժ պիտի մնայ» հրաման տուող Համիդի պատկերն այլևս ինչո՞ւ պիտի մնար Մուսայէն խողխողած հայերու պատրիարքարանի դահլիճին մէջ, մէկ ցայտումով պատէն վար տոբի և բզիկբզիկ ընելով դրան ետև ձգեցի...:

«Դահլիճին մէջտեղ դրած կանաչ չուխայով ծածկւած սեղանին քով նստանք և ատրճառակնիս առջևնիս դրած Մուրատի հետ խորհրդակցութեան սկսած էինք: Կը խորհէինք հակառակ պարագային Աշգեանը սպանել և ցոյցը վերջացած յայտարարել: Ես այս կերպին համոզւած էի, իսկ Մուրատը Վարիշ Մարմնոյ քով եղած պատասխանատուութիւննիս մէջ կը բերէր: Ես այդ կը ստանձնէի»:

ԻՐ.

«...Աշգեան անդրդւելի կը մնար ու կը յամուէր: Որչափ որ զինքը համոզեցի թէ՛ ինքը զիս պալատ տանելով որեւիցէ պատասխանատուութիւն հրաւիրած չպիտի լինի իր վախ, որովհետև ես Սուլթանին պիտի ըսէի թէ զինքը ճշման ներքև հետոս առած պալատ բերած եմ: Աշգեանէն խնդրեցի, որ համակերպի, որովհետև եթէ զինքը պալատ չտանեմ՝ հանդէպ ընկերներու ծանր պատասխանատուութեան ներքև պիտի մընամ, հետևաբար պէտք է անպատճառ երթանք,

երբ տեսայ Աշգեան նորէն չհամակերպիր սենեակէն դուրս ելայ:

«Նազարէթի հետ չորս զինւած ընկերներ առի Աշգեանի սենեակը մտայ և կարգաւ կեցուցի, ատրճառակները դէպի Աշգեանը ուղղած և դարձայ Աշգեանին ըսելու.

— «Ասիկա վերջին դիմումս է. ասոնք տրւած նշանիս կապասեն (Նազարէթը իր ընկերներով՝ «այո, ճիշտ է» ըսին), եթէ պիտի համակերպիս զիս հետդ առնելով պալատ տանիլ Սուլթանին ներկայացնել, լաւ. եթէ կրկին պիտի յամառիս, տւած նշանէս յետոյ ասոնք (գառտի յամառիս, տւած նշանէս յետոյ ասոնք (զառնալով դէպի ընկերներս) քեզ պիտի սպանեն չարաչար կերպով. ուստի երկուքէն մէկն ընտրէ, ժամանակնիս սուղ է, եթէ պիտի գաս՝ ոտքի ել, եթէ ոչ՝ իսկոյն նշան կուտամ:

«Աշգեան ոտքի ելաւ:

«Աշգեանի հետ սենեակին դուռնէն դուրս ելնելիս ընկերներուս ոգևորութիւնը էլեքարականացուց. սկսան ծափահարել և «կեցցէ Հրնչակեան կուսակցութիւնը» պօռալ...:

«Քանի մը ընկերներով շրջանակ մը կազմել տւի և Աշգեանը այդ շրջանակին մէջ առնելով՝ ճամբայ ելանք:

«Կեցցէ Հրնչակեան կուսակցութիւն, կեցցէ հայ ազգը, կեցցէ Հայաստան, կեցցէ ազատութիւն» և այլ բացականչութիւնները ականջներ կը խուլացնէին, իսկ պալատ չէին վախառններ, տղաքներու հառաչանք, որոնք այո ծովա-

ծաւալ բազմութեան մէջ ոտքերու տակ կը կոխկուտէին: Բազմութիւնն այնչափ խիտ ու շատ էր և հետաքրքրութիւնն այն աստիճանին հասած էր, որ մեր կորովի հինգ-վեց ընկերները սպառնալիքներով իսկ հազիւ կրնային ճամբայ բանալ, որ փողոցին ծայրը հասնէինք և կառք նստէինք, որովհետեւ կառապանը չէր կարողացած ճամբայ բանալ և մինչև պատրիարքարանին դուռը գալ:

«... Աշգեան պողոտային և պատշգամբներու ու պատուհաններու մէջ եղած բազմութիւնը տեսնելով՝ յանկարծ նւաղեցաւ ու գետին փուկեցաւ: Ստիպեցանք մօտակայ հայ գեղատունը տանել և սթափեցուցիչ դեղ մը տալ:

«Աշգեանը կառք դրինք, ես և Մամբրէ վարդապետը*) զիմացը նստանք ու բարապան մըն ալ կառապանին քով: Կառքը ճամբայ ելաւ. կառապանին նւէր մը խոստացւած էր, եթէ կառքին արագութիւն տար:

«Նազարէթին, Կարապետին և մէկ քանիններու (տասնապետներ և յիսնապետներ են) հրահանգեցի, ցոյցը վերջացած է և ընկերներն այլևս ազատ են իրենց տեղեր երթալու:

«Կառքին հետևող դեռ ընկերներ կային և կառքը հազիւ թէ 40—50 քայլի չափ յառաջացած էր, յանկարծ 50-ի չափ զօրքերով պաշար-

*) Մամբրէն Խրիմեանի մարզն էր և յեղափոխականների ընկեր, բայց յետոյ մատնիչ եղաւ, ուստի յեղափոխականները նրան սպանեցին:

ւեցանք, ինչպէս նաև քանի մը հեծելազօրքերով: Զօրքերը հրացաններուն անցուցած սլինները կառքին պատուհաններէն ներս պարզելով ըստպառնացան. եթէ երբէք չհնազանդէինք՝ մեզ պիտի սպանէին: Յիսնապետ մը Աշգեանին ըսաւ.

— «Պալատէն եկած հրամանն է, որ քեզ գտած տեղերնիս դադարեցնենք՝ մինչև հրամանատարին ժամանումը, անշուշտ պիտի համակերպիք»:

«Ստիպեալ համակերպեցանք և յիսնապետը մեզի կառքէ դուրս հանելով՝ մօտը գտնւած յոյնի մը տունը տարաւ և վերի սենեակը նստեցուց...:

«Քիչ յետոյ Արդիւլ Համիդի աւագ թիկնապան միւշիք Տէրվիշ-փաշան, զինուորական ընդհանուր հրամանատարը և քարի մը պալատականներ սենեակէն ներս մտան:

«Տէրվիշ-փաշան ամենէն առաջ հետաքրքրեցաւ Աշգեանի որպիսութիւնով, թէ վէրք ունի, ցոյցն ինչպէս սկսեցաւ և ինչպէս վերջացաւ:

«Աշգեան ըսաւ.

— «Սկզբէն մէկը սեղանին վրայ ելաւ և սկսաւ թուղթ մը կարգալ, և ուրիշ անձ մ'ալ ինձի եկաւ և առաջարկեց. որ զինքը պալատ տանեմ և Նորին Վեհափառութեանը ներկայացնեմ. բնականաբար պիտի մերժէի և մերժեցի: Անկէ վերջ տեղի ունեցածը չեմ յիշեր, որով-

հետեւ քանի մը անգամ նւագեցայ, չափէն աւելի չարհարեցին զիս, բայց չվիրաւորեցին: Պատրիարքարանի դռնէն դուրս ելած ատեն զիս պիտի սպանէին, այն ատեն այս էֆէնդին (զիս ցուցանելով) զիս ազատեց անոնց ձեռքէն. կեանքս այս էֆէնդին կը պարտիմ: Եղածնեւէն այսչափ կը յիշեմ»:

«Տէրվիշ և հրամանատար փաշաները, — զբռնում է մեր յեղափոխական պատմիչ հերոսը, — շնորհակալութիւն յայտնեցին ինձ և խա ըսի:

«Շնորհակալութեան պէտք չկայ, իբր հայ պարտականութիւնս էր ազգիս — պատրիարքը պաշտպանել, փոյթ չէ, թէ այդ պատճառաւ, ինչպէս կը տեսնաք, թեթեւ կերպով վիրաւորւեցայ:

«Փաշաները վիրաւորւելուս համար ցաւ յայտնեցին և զէպի Աշգեանը դառնալով ըսին.

— «Անշուշտ սեղանին վրայ ճառ կարդացողը կը ճանչնաք:

— Ոչ, չեմ կրնար, ըսաւ Աշգեան:

«Տէրվիշ-փաշան ըսաւ Աշգեանին.

— «Քիչ մը հոս կեցիք և ձեր հանգիստը նայեցէք, մենք քիչ մը վերջը կուգանք*»):

Յոյնի տան վերնայարկում մի թեթեւ, նախնական քննութիւն կատարելուց յետոյ՝ փաշաների ժողովը Աշգեանին պատրիարքարան ուղարկեց, իսկ Կայծիկին — բանտ:

Նրա քննութիւնը մի ամիս տևեց, որից

*) Նոյնը՝ եր. 28—31 և 34—38:

յետոյ զինւորական դատարանը նրան մահաւան դատապարտեց:

Սակայն Սուլթանը ոռոտաց ղեսպանի միջնորդութեամբ՝ դատարանի վճիռը փոխելով՝ ցրմահ արքային նշանակեց Աքիայի բերդում*):

Իժ.

Մինչդեռ փաշաները յոյնին տանը նախնական թեթեւ քննութիւն կը կատարէին — պատրիարքարանի շրջակայ փողոցները կատարեալ պատերազմի դաշտ էին դարձել:

Զօրքերի հրամանատարը հրամայեց բազմութեանը ցրել. սակայն մարդիկ տեղերից չէին շարժուում: Դրանց մեծ մասը Հնչակեան կուսակցութեան զինւած անդամներն էին, որոնք «զիմագրել սկսած էին. զօրքերը իրենց հրացանները կը գործածէին և մերիկներն իրենց ատրճանակները: Երկուքին մէջ սոսկալի կռիւ մը սկսած էր, մերիկներն այն ատեն սկսան կատաղի կերպով զօրքերու վրայ կրակել, երբ տեսան, որ վանեցի Մանուկ Նալբանդեան զօրքերու սկիւններու տակ անկենդան գետին փռւեցաւ:

Մերիկներն առաջին հայ նահատակը և հայ

*) Աճիայի ոռոտաց հիւպատոսը յաճախ սլոցելով է արքայատեղին և առաջարկում էր իր օժանդակութիւնը եւ օգնութիւնը (եր. 69 և 96): Միքանի տուրուց յետոյ արքայազն Սուլթանի ներմանն արժանացաւ:

արեան վազելը տեսնելով՝ փրփրած աջ ու ձախ սկսան զօրքերուն վրայ կրակել:

Զինուորները կը հետապնդէին ատրճանակ արձակողները ձերբակալել:

Երբ մերինները Սերաստացի Յովհաննէս Ղումբիկեան տասնապետի բրած դիմադրութեան պատճառաւ սպանւիլը տեսան, սկսեցին խմբովին զօրքերուն վրայ յարձակել և անոնցմէ մէկ քանինները վիրաւորել».

«Օգնական զօրք հասնելուն պատճառաւ կրակը դադրած էր այլևս: Փողոցի մէջ երկու հայ նահատակներ փուած էին, ինչպէս նաև 6—7 հատ ծանր կերպով վիրաւորուած զօրքեր: Թէև զօրքերէն 10 հատի չափ ալ վիրաւորուած կային, բայց վէրքերնին այնչափ ծանր չէր: Կռքեր բերեցան մեր երկու ընկերներուն դիակները և ծանր վէրք ունեցող զօրքերը անոնց մէջ լեցնելով տարին»*):

Լ.

Այդ իրարանցումի ժամանակ՝ 15 ոստիկան սպանւեցան իրենց ոստիկանապետի հետ, որի դիակը ոստիկաններն ու մուլանները վերցնելով սկսան ման ածել քաղաքի զանազան փողոցները՝ զրգուելու համար մահմեդականներին հայերի դէմ:

Քաղաքի զանազան թաղերում կազմակերպ-

*) Նոյնը, եր. 40—41:

ւեցին մուլանները, սօֆիթաներ, ծպուած զինւորներ, քիւրդեր և այլ ստորին դասակարգի սրիկաներ, որոնք ատրճանակներով, գաշոյններով, երկաթէ կոպալներով ու բիրբերով զինուած՝ յարձակեցան հայոց վրայ: Սարսափը ընդհանուր էր. հայերը պաշտպանութեան ամեն միջոցներից զուրկ՝ անխնայ կոտորուում էին: Հազարաւոր հայեր ձերբակալեցան և բանտ նետուեցան: Երկու հազար հայեր սարսափահար ապուխեցան Գում-Գաբուլի, Ղալաթիոյ և Պերալի եկեղեցիները*):

«Զարդը երեք օր տևեց, — հոկտեմբերի 2-ին, 8-ին և 9-ին, երբ մի քանի հարիւր հայեր կոտորուեցան և նրանց անեղն ու խանութները կողոպտուեցան**):

Սկսած ջարդերին մեծ ծաւալ չտալու համար ղեսպանները ժողովեցան խորհրդածելու, թէ ինչ ելք տան գործին:

Եւ մինչդեռ ղեսպանները խորհրդածում էին՝ գաւառներում սկսեցաւ հայկական ընդհանուր կոտորածը:

— Առաջին գոյժը, — գրում է պատմիչը, — Տրապիզոնից եկաւ: Շրջակայ հեռաւոր զիւղե-

*) Աճառեան՝ «Տաճկահայոց դատի պատմութիւնը», եր. 29:

**) Կատաղած տաճիկների ձեռքից աղաւելու համար՝ մի քանի հայեր ծովք ընկնելով՝ նաւահանգստում կանգնած ոռոսական նաւին ապաստանեցան, բայց... յետ մղեցան դէպի ծովը:

րից հաւաքւած թիւրք ու լազ ամբոխը, միա-
նալով քաղաքի տաճիկներին, մոլլաներին և զին-
ւորներին հետ, կառավարական պաշտօնեաների
ներկայութեամբ ու քաջալերութեամբ և շատ
քրիստոնեայ յոյն ազգաբնակչութեան ցուց-
մունքներով—ընկան հայերի վրայ, կոտորեցին,
թալանեցին ու այրեցին: Առնւազն 600 սպանե-
ցան, 1500 Ռուսիա ապաւինեցան և 5 միլիոն
ֆրանքի հարստութիւն մոխիր դարձաւ սեպտեմ-
բերի 22—26-ին, 1895:

«Այնուհետև կոտորածը շարունակեց բո-
լոր հայաբնակ քաղաքներն ու գիւղերը, սկսած
Պօլսից մինչև Տիգրանակերտ գրեթէ չմնաց մի
որևէ քաղաք կամ գիւղ, որ ազատ մնար ջար-
դից:

«Ամենախոշոր ջարդերը տեղի ունեցան՝
Բաբերդ (1400 հոգի), Քղի (1000 հոգի), Եդե-
սիա (7000 հոգի), Շապին-Քարահիսար (5000
հոգի), Սեբաստիա (1500 հոգի), Կիւրին (1200
հոգի), Բալու (1200 հոգի), Ակն (4000 հոգի),
Արաբկիր (2800 հոգի), Մալաթիա (3000 հոգի),
Տիգրանակերտ (1200 հոգի), Հալէպ (1000 հո-
գի), Մարաշ 1400 հոգի), Կեսարիա (1000 հ.),
Այնթափ (1000 հոգի) և այլն:

«Տեղ-տեղ ջարդերը կրկնւեցան երկու կամ
երեք անգամ. այսպէս՝ Մարաշ, մանաւանդ Ակն
և Եդեսիա, որոնք անմարդաբնակ աւերակների
վերածւեցան: Ամեն տեղ էլ ջարդերը տեղի ու-
նեցան սարսափելի խժգժութեամբ և տխուր
միօրինակութեամբ:

«...Ջարդարարները թափւում էին հայոց
շուկաները, նախ կոտորում էին մարդկանց և
յետոյ սկսում էին թալանել՝ թալանից յետոյ՝
կրակ էին տալիս: Կոտորածից ազատւածները
գլխապատառ փախչում էին տուն և աշխատե-
լով վերցնել իրենց ընտանիքը, ապաւի-
նում էին եկեղեցիները, հիւպատոսարանները,
եւրոպացիների տները:

«...Սարսափելի էր եկեղեցիներում ապա-
տանած հայերի վիճակը. արիւնը հեղեղի պէս
հոսում էր կամ կրակ էին տալիս և բոլորին այ-
րում և կամ փախչողներին կրակում, գնդակա-
հար անում:

«Մալաթիոյ եկեղեցում 3000 հոգի էին ա-
պաւինել, քաղցած ու ծարաւ մնացին նրանք
այնտեղ քանի-քանի օր, օդի սակաւութիւնից,
տաքից և իրենց ապականութեանց ժահհոտու-
թիւնից հարիւրաւորներ շնչահեղձ եղան: Եդե-
սիոյ դարհուրելի ջարդին նոյնպէս 3000 հոգի՝
մեծ մասամբ կին, աղջիկ և երեխայ, ապաւինել
էին եկեղեցին և ծնկաչոք աղօթում էին Աս-
տուծուն. աւազակները հասան, կոտորեցին զըն-
տանները և ներս թափւեցին, սկսան ջարդել, յետոյ
նաւթ ածեցին եկեղեցու վրայ և կրակ տալով՝
կենդանի մնացածներին էլ դիակների հետ այ-
րեցին»*):

ԼԱ.

Դառնանք ղեսպանների խորհրդածութեանը:

*) «Տաճկահայոց հարցի պատմ.» եր. 31—32:

Նրանք վճռեցին նորից դիմումն անել Բ. Դռանը պահանջելով մայիսի 11-ին ծրագրւած բարենորոգումները, որոնց միջից դուրս ձգեցին առաջին պարբերութիւնը, այսինքն վալլիների ընտրութիւնը Սուլթանի ազատ կամքին թողին՝ առնելով ի յարգանս նրա վեհապետական իրաւունքները:

Այն ժամանակ Սուլթանը գիշաւ ծրագրի մնացեալ մասերը գործադրել և 1895 հոկտ. 20-ին իրագէ տւեց:

Դժբաղդաբար այդ իրագէի տւելութիւնը հայութեան վրայ շատ թանկ նստեց: Կառավարութեան կողմից եղած զիջումների լուրը սաստիկ զայրացրեց մահմեդական ժողովրդին, անշուշտ կառավարութեան իրեն թելադրութեամբ առաւելապէս: Մահմեդականները կարծեցին կամ կարծել ձեացուցին, թէ քրիստոնեայ հայերը այնուհետև իրենց տէրը պէտք է լինեն և թերևս, իրենց հերթում, մահմեդականներին կոտորեն:

Եւ այս պատճառաւ՝ հոկտեմբերի 20-ի իրագէն նոյեմբերի և դեկտեմբերի մեծ կոտորածի նշանը եղաւ:

Եւ այնուհետև զոհերը հարիւրներով չեն հաշոււմ, այլ հազարներով:

Մզկիթների բարձունքներից մուլաները հըրաւէր կարգացին իրենց հաւատակիցներին՝ աւար հարկանել հայերի տները և կոտորել նրանց ամեն տեղ, քաղաքներում և գիւղերում:

Ջարդարաններին ղեկավարում էին Սուլթանի սպաները, որոնց մէջ Շաքիր փաշան հրապարակաւ յայտարարում էր, թէ՝ «Տէրն է թոյլ տրւել ջարդել հայերին»:

Գրեթէ երեք ամիս՝ բոլոր հայաբնակ գաւառները զարհուրելի կերպով տրնաշաղախ եղան:

Միւսնոյն սարսափները, Պօլսից ստացւած հրամանների համեմատ, տարածւեցան հետզհետէ գաւառները, որոնց գլխաւորները վերևում յիշեցինք: Այդ միջոցում կոտորւած զոհերի թիւը 100,000-ի հասաւ: Եւ ջարդերի ծայրը մինչև իսկ Զէյթուն հասաւ, Եւրոպայի աչքի առաջ:

Հայերին կոտորելիս մահմեդականները միշտ այս էին ասում ծաղրանքով՝ «գնացէք գեսապաններին գանգատ տւեցէք»:

Իսկ գեսապաններն ու հիւպատոսներն ամեն տեղ իրենց տեղերումը նստած՝ հանգիստ սըրտով ու խղճով հանգիստաւես էին լինում արբւնուշտ տեսարաններին:

Հանգիստ չէր միայն Անգլիոյ գեսապանի սիրտը, բայց նա էլ ոչինչ չկարողացաւ անել՝ միշտ ընդդիմութեան հանդիպելով միւս գեսապանների կողմից:

Գալով Բ. Դռանը, սա էլ Անգլիոյ առաջարկութիւններին միշտ այն պատասխանն էր տալիս, որ Տաճկահայաստանում բարենորոգումների ներմուծմանը արգելք հանգիստացողները հայ յեղափոխական շարժումներն են, որոնց զսպելով

է առայժմ զբաղւած օսմ. կառավարութիւնը:

Այսպէս ասում էր Սուլթանը և միանգամայն վստահ ու ապահով պետութիւնների անհամաձայնութեան և ճնշում գործելու անկարելիութեան վրայ՝ շարունակում էր ջարդերը:

Այդ միջոցին էր, որ գեապանների խնդիրն յաջգելով՝ Սուլթանը արտօնութիւն աւելցնում էր նրանց միմի նոր պահականաւեր բերել ապ Ոսկեղջիւր՝ ի պաշտպանութիւն իրենց և իրենց եւրոպացի ազգականներին:

ԼԲ.

Մինչև այդ ժամանակ ջարդերից գրեթէ ազատ էր մնացած Վանի հայաշատ նահանգը: Այնտեղ էլ այժմ միւշիւր Սաատէղլին փաշան ուղարկւեցաւ ջարդերը կազմակերպելու:

Փաշան կատարելագործւած հրացաններով գինեց քրդերին, մինչև իսկ թնդանօթներ դրեց նրանց արամադրութեան տակ: Այդ գէնքերով 1896 յուլիսի 15-ից մինչև 25-ը Վանը և շրջակայ հարուստ գիւղերը հրդեհւեցան: Բոցերի միջից ցայտած ուռմբերն ու գնդակները հնձում էին հայ ժողովրդին. բոլոր կանայք առեւանգւեցան և չարաչար բռնաբարւեցան, տասը տարեկանից վեր բոլոր արու երեխաները կոտորւեցան: Բոլոր եկեղեցիները, բոլոր վանքերը և նամանաւանդ Վարազայ նշանաւոր վանքը՝ կողոպտւեցան ու քանդւեցան: Աւելի քան

20,000 հազար հայ մեռան առանց հաշւելու նրանց, որոնք յետոյ այդ աւերածութիւնների ու թշւառութիւնների երեսից մահացան:

Ի վարձատրութիւն իր այդ քաջագործութեան համար՝ Սաատէղլին փաշան օսմանիէ շքանշանն ստացաւ*):

Վրէժխնդրութեամբ լցւած՝ հայ յեղափոխականները կամեցան մի նոր ցոյցով ստիպել եւրոպային իր անգործութիւնից դուրս գալու:

Առանց լուծելու այն հարցը, թէ յեղափոխականները իրենց այդ որոշումը արդեօք ինքնաբերաբար արին, թէ գուցէ այս կամ այն պետութեան ներկայացուցչի խորհրդով կամ ներշնչմամբ. — մենք կանցնենք նոր ցոյցի նկարագրութեանը:

ԼԳ.

Նոր ցոյցը տեղի ունեցաւ 1896 օգոստոսի 26-ին: Յոյցը կազմակերպեց Հայ Յեղափոխական Դաշնակցութիւնը:

Գում-Գափուի ցոյցի անյաշողութիւնը իր սարսափելի հետևանքներով սաստիկ վարկաբեկեց Հնչակեան կուսակցութեան անունը հասարակութեան աչքում:

Ապա գժգոհութիւններն ու տրտունջները ծայր տւին կուսակցութեան անգամների մէջ և շատերը թողին ու հեռացան:

*) Վանի կոտորածի մանրամասնութիւնը տես Ա. ճառեանի զրքոյկի 39—41 էրեսներում:

Քանի Հնչակեանները թուլանում էին, այն-
քան զօրանում էր ու զարգանում Հայ Յեղա-
փոխական Դաշնակցութիւնը, որ, ինչպէս յիշել
ենք, կազմակերպւեցաւ Կովկասում*):

Դաշնակցութեան ցոյցը, որ յայտնի է
Օսմանեան բանկայի գրաւում անունով, այսպէս
էր ծրագրւած:

«Վեց անշատ խմբեր օգոստոսի 14-ին, մի-
նոյն ժամին, պիտի յարձակէին տարբեր դիր-
քերի վրայ: Առաջին խումբը պիտի գրաւէր օս-
մանեան բանկը, երկրորդը՝ Սամաթիան ոտքի պիտի
հանէր, երրորդը՝ օդը պիտի թռցնէր Բ. Դուռը,
չորրորդը՝ ռումբերով պիտի կործանէր կամուր-
ջի գլխի մեծ պահականոցը, միւսները պիտի
գրաւէին Վոյվոտայի և Կալաթա Սէրայի պահակա-
նոցները:

Այս բոլորից գլխաւորն էր օսմանեան բան-
կի գրաւումը. այստեղ էր դիզւած օսմանեան տէ-
րութեան գանձը, այստեղ էին պահւում բոլոր
հարկերի, տուրքերի, եկամուտների և զանազան
տէրութեանց պարտքերի հաշիւներն ու մատ-
եանները, արժէթղթերը, տոկոսաբեր թղթերը և
այլն:

*) Դաշնակցութեան նման՝ Հնչակեան կուսակցու-
թիւնն ևս Կովկասումն էր կազմւած: Բացի այդ երկու
խոշոր կազմակերպութիւններից, կար նաև առաջին յե-
ղափոխական կազմակերպութիւնը՝ Արմէնական անու-
նով, որի հիմնական գաղափարը ինքնապաշտպանու-
թիւնն էր:

Պրաւելով բանկը, հայերը պիտի պահանջե-
ին հայոց հարցի կարգադրութիւնը, հակառակ
պարագային սպառնալով այրել ու կործանել
ամբողջը:

Որոշեալ օրը 25 դաշնակցականներ Պետրոս
Բարեանի*) առաջնորդութեամբ՝ ռումբերով,
ատրճանակներով զինւած մտան բանկը և գրա-
ւեցին, գերելով բանկի 120 պաշտօնեաներին**):

Բանկի եւրոպացի տնօրէնը բանակցութեան
մէջ մտաւ նրանց հետ և յաջողեց ազատել գե-
րիներին: Իսկ մինչև այդ ժամանակ զօրք եկաւ
և բանկը շրջապատեց:

Զօրքի գալուց անմիջապէս յետոյ՝ բանկն
եկաւ ռուս զեսպանատան գործակալ Մաքսիմո-
վիչը և Սուլթանի անունից իրենց կեանքն փրկ-
կելու խոստումն տալով՝ հրաւիրեց նրանց—յե-
ղափոխականներին բանկից դուրս գալ և անց-
նել, գնալ... Եւրոպա: Յեղափոխականները
դուրս ելան:

Սուլթանի նախընթաց կարգադրութեան հա-
մաձայն, որ Մաքսիմովիչի միջնորդութեան վը-
րայ էր հիմնւած, թիւրք զօրքերը օսմանեան
բանկից մինչև ծովեզրը երկու շաբթ կանգնե-
ցան, և այդ շաբթերի միջով յեղափոխականները
ամենայն ապահովութեամբ հասան ծովափը,
նստան «Ժեռօնդ» շոգենաւը և ճամբայ ընկան

*) Բանկի դրանը կանգնած ժամանակ՝ իր ձեռքի
ռումբի պայթումից՝ Բարեանը սպանւեցաւ:

**) Տաճկ, դատի պատմ., հր. 43—44:

Մարտիրոս, յետոյ էլ այնտեղից անցան Ձւիցերիա, ոմանք էլ Արգենդինա*):

Միւս խմբերից երկրորդը զիրք բռնեց Սամաթիայում, ուսմբով կոտորեց բազմաթիւ զինւորներ, բայց վերջապէս զինւորները պաշարեցին և նրանք անձնատուր չլինելու համար անձնապահութեան գիմեցին:

Մնացեալ չորս խմբերը չէին կարողացել նոյնիսկ գործի ձեռնարկել: Ոստիկանութիւնը նախապէս լսելով Հայոց շարժման մասին, շատերին ձերբակալել էր և ամեն կողմ պահակներ դնելով՝ գէպքի առաջն առել էր**):

ԼԴ.

Յեղափոխականներին ճանապարհ ձգելուց յետոյ Մաքսիմովիչը ներկայացաւ Արգիւլ-Համիդին, որ զարհուրելի կերպով պայրացած՝ Մաք-

*) Ահա այս է դաշնակցականների օսմանեան բանկի գրաւման պատմութիւնը, որ այնքան դժուար է «Баку»-ի խմբագիր Բ. Վերմիշեանը «Бирж. Вѣд.» թերթում: Պ. Բ. Վերմիշեանը, որքան որ յայտնի հրապարակախօս է մեղանում, բայց և այնպէս անձանոթ լինելով հայ լեզւին և պատմութեանը ու օտար աղբիւրներից քաղելով իր տեղեկութիւնները, — սրանք յաճախ սխալ կամ միտումաւոր են լինում, — կարող էր յափշտակել օսմանեան բանկի վրայ եղած յարձակումով և նրա ծիծաղելի վերջաւորութեամբ: Բայց հապաինչպէս բացատրել և արդարացնել մեր հինաւորեց պատմաբան Լէօնին, որ Հայ Յեղ. Դաշնակցութեան յիշեալ ծիծաղելի և զրգռական-պրօվակատորական գործը՝ «հրային մկրտութիւն» և «դրախտային բաւակաւութիւն» է համարում: («Արեգ», 1915, № 6):

**) Տաճկ. հարցի պատմ., երես. 44:

սիմովիչին յայտնեց, որ ոստիկանութիւնը մի կարգ տների մէջ ուսմբեր և ուժանակ — զինամիտ երեւան հանած էր, մանաւանդ արձակուրդի պատճառաւ փակեած աղջկանց ուսումնարանի մէջ:

— «Massacrez Majesté» (Ջարդեցէք, Ձերդ Մեծութիւն), — խորհուրդ տւեց Մաքսիմովիչը՝ շահագործելով բոլէշն:

Հետեւեալ օրը մոլեռանդ խուժանը՝ մահակներով զինւած և ոստիկանների ու սպանների առաջնորդութեամբ՝ հայկական Սասքեօյ կոչւած թաղի վրայ յարձակւեցաւ և միքանի վայրկեանի մէջ թաղը մարդկային սպանդանոցի վերածեց:

Այնուհետև ջարդարարները անցան ուրիշ թաղեր և երկու օր, երկու գիշեր — օգոստոսի 27-ին և 28-ին բոլոր հայ տները թալանեցին առանց բացառութեան: Որտեղ որ մի հայ տղամարդ էին տեսնում*), տեղն ու տեղը սպանում էին ինչով որ պատահում էր, գէնքով, մահակով:

Եւ դիակները նաւակների մէջ զետեղելով և վրան քարեր դարսելով՝ թողով կապում, ամբողջում էին և ծովափը տանելով՝ նաւակը ծակում և անդունդն էին իջեցնում:

Շատ անգամ էլ հայերին կենդանի բռնտելով՝ ձեռքերն ու ոտքերը կապոտում էին, բերանները խցում և վզերին քար կապելով ծովը նետում:

*) Այս անգամ կանանց ձեռքը չտւին:

Բազմաթիւ հայերի կտրատուած ձեռքեր մտաւաճառների խանութներում. կախում էին այսպիսի ցուցանակով՝ «ծախու խողի ոտքեր»:

Կ. Պօլսոյ ամբողջ փողոցները արիւնով ներկւած էին:

Ոսկեղջիւրի ջրերը հազարաւոր հայերի դիակները Վոսփոք տարան:

Երկու երեք օրում Կ. Պօլսում կոտորուած հայերի թիւը 6000-ից անցաւ:

Եւ այս ամեն խժդժութիւնները կատարւեցաւ եւրոպական քրիստոնէայ մեծ պետութիւնների աչքի առաջ, նրանց ամեն մէկի կրկին պահականաւորի դէմ առ դէմ:

.
.
.
.

ԼԵ.

Բայց միթէ,—անշուշտ հարցնում է ընթերցողը,—միթէ եւրոպական մեծ պետութիւնները որեւէ գործնական քայլ չարին վերջապէս, մի կերպ վերջ դնելու այս ոճիրներին, որոնց նմանը չէ երեւում պատմութեան մէջ միջին դարից ի վեր:

—Մենք արդէն տեսանք, որ Աւստրիան և Գերմանիան մի կողմ կանգնած՝ իրենց ձայնը տուած էին Ռուսաստանին: Իսկ վերջինս էլ,

այդ ևս տեսանք, թէ ինչ դիրք էր բռնել դէպի հայերը և ինչ դիրք դէպի Սուլթանը: Մնում էր Ֆրանսիան, որ Ռուսաստանի հետ «համաձայնութիւն» էր կայացրել եւրոպական ընդհանուր հարցերի նկատմամբ: Եւ ուրեմն՝ առանց Ռուսաստանին կամ գէթ առանց նրա նախընթաց գիտութեանն ու համաձայնութեանը՝ կարող չէր հրապարակ դուրս գալ ընդդէմ Սուլթանին: Իսկ Ռուսաստանի հետ խորհրդակցելու և նրա հետ հայկական հարցի առթիւ որեւէ համաձայնութեան ու որոշման գալու՝ հնարաւորութիւն չունէր Ֆրանսիան, որովհետեւ այդ միջոցում ռուս կառավարութիւնը շփոթ վիճակի մէջ էր գտնւում Ադէքսանդր III կայսեր անակրնունելի հիւանդութեան և մահւան պատճառաւ և 1894-ին և արտաքին գործերի մինիստր Լաբանովի յանկարծական մահւան պատճառաւ 1896-ին:

Մէջտեղում ուրեմն մնում էր Անգլիան դարձեալ, որ ոչ միայն համակիր էր դէպի հայերն, այլև պարտաւոր էր ի պաշտօնէ օգնել հայերին՝ համաձայն Կիպրոսի դաշնադրութեան:

Եւ Անգլիան ձեռնարկեց նորից՝ օգնելու: Վերջին կոտորածների առթիւ՝ Անգլիայի հանրային կարծիքը իր զայրոյթը Սուլթանի դէմ արտայայտեց ազմկալի միտինգներով և Գլադստոնի որոտնդոտ ճառով, որի մէջ մեծ ծերունին Աբգիւլ Համիդի ճակատը դրօշմեց «մարդասպան» և «կարմիր սուլթան» տիտղոսներով:

Անգլիական կառավարութիւնն ևս մի անգամ ևս փորձեց ձեռք բերել տէրութիւնների ազդու միջամտութիւնը: Ուստի 1896 սեպտեմբերի 16-ին պատերեց Պօլսոյ իր գեսպանին յայտարարելու Սուլթանին, թէ «իր կայսրութեան վատթար վարչութեան շարունակութիւնը իր գահին կորստեան պատճառ պիտի դառնայ»:

Սակայն, — ինչպէս ընթերցողը գիտէ, — Աբդուլ-Համիդ արդէն արտօնում եւ ապահովում էր Անգլիայի սպառնալիքներից չվախենալու, այլ ուղղակի արհամարհելու նրանց:

Այդ գիտենալով՝ անգլիական կառավարութիւնը հոկտեմբերի 21-ին մի յիշատակազրով Բերլինի դաշնագիրն ստորագրող պետութիւններին առաջարկեց «բռնի ուժով ջնջելու այն թերութիւնները, որոնք կը կործանեն թիւրք կայսրութիւնը»: Եւ առաջարկեց վեց մեծ պետութիւնների կողմից մի-մի՝ զրահաւոր նաւ ուղարկել Ոսկեղջիւր, այդպիսով եւրոպական ճրջմարիտ համաձայնութեան տպաւորութիւն գործելու Սուլթանի վրայ:

Բայց Անգլիայի այս յիշատակազիրն ու առաջարկն ևս ոչ մի հետեանք չունեցաւ՝ պետութիւնների միմեանց դէմ ունեցած կասկածների և իրենց առանձնական հաշիւների պատճառաւ:

• • • • •
• • • • •
• • • • •
• • • • •
• • • • •

Փարիզում կայացած այս համաձայնութեամբ՝ ուրեմն եւրոպական մեծ պետութիւններն իրենց խնամակալութեան տակն էին վերցնում ոչ թէ միայն Բերլինի դաշնագրի 61-րդ յօդաժողով յիշած հայերն ևեթ, այլ օսմանեան կայսրութեան բոլոր հպատակներն: Այսինքն Փարիզում կայացած համաձայնութեամբ՝ Կիպրոսի դաշնագիրը ոչնչանում էր: Անգլիայի ձեռքից առնելով և Եւրոպայի բոլոր մեծ պետութիւնների հաւաքական խնամակալութեան տակ դնելով ոչ միայն Փոքր Ասիայի ժողովուրդներին (ինչպէս առում էր Կիպրոսի դաշնագրում), այլ Սուլթանի բոլոր հպատակներին և նրա ամբողջ կայսրութեան մէջ:

Բայց ահա անցել է մօտ 20 տարի և ոչ Փոքր Ասիայի, ոչ էլ նմանապէս Տաճկաստանի միւս մասերի ժողովուրդներն ոչ մի բանով չտեսան և չվայելեցին ինչպէս Ռուսաստանի և Անգլիայի, նոյնպէս և բոլոր մեծ պետութիւնների առանձնական կամ հաւաքական խնամակալութեան բարերար ազդեցութիւնը:

12.

Այս պատճառաւ՝ օսմանեան կայսրութեան ժողովուրդներից զոնէ մենք — հայերս, կատարեալ իրաւունք ունինք պնդելու էմիլ Դիլլոնի հետ թէ՛ «Եւրոպացիների համակրութիւնն ու կարեկցութիւնը, որ նրանք արտայայտում են

իրենց ժողովներում գէպի հայերը, առանց որեւէ գործնական քայլ անելու նրանց ապահովութեան համար, հայերին ոչ թէ օգուտ չէ բերում, այլ բացարձակ վնաս»*):

Թէ՛ «աւելի լաւ չէ՞ր Սասունի ջարդի մասին լուել և աչքերը փակել մարդկանց սոսկալի մահը չտեսնելու համար, քան թէ մինչև խելագարութեան հասցնելով թիւրքերի կատաղութիւնը՝ թոյլ տալ նրանց իրենց վրէժը ամբողջ ուժով թափել քրիստոնեայ ժողովրդի գլխին, որոնց միակ պաշտպանը եղել է մեր կողմից՝ մեր փոփոխ ու փրփու պերճախօսութիւնը»**):

Թէ՛ «հայերին մեր պաշտպանութեան տակ առնելով մենք, հանդիսաւոր կերպով, ջնջեցինք քաւարանը և նրան կատարեալ դժոխքի վերածեցինք: Մենք պատճառ եղանք, որ թիւրքերի վարչական անկանոն եղանակը վերածւի անողորմ ջնջման կանոնաւոր սխտեմի»***):

Թէ՛ այդ սխտեմի երեսից՝ «այժմ հայերը երկրագնդիս խեղճ ու ողորմելի ազգերի շարքն են ընկել»****):

Թէ՛ «Եւրոպայի համակրութիւնը գէպի հայերը՝ ոչնչով չէ արտայայտուել, եթէ ոչ նրանց դիակների վրայ շարւած խաչերով»*****)

Մի խօսքով, ի շնորհս եւրոպական կարծե-

*) Положение дѣлъ въ Тур. Арменіи, кр. 2:

**) Նոյնը, կր. 3:

***) Նոյնը, կր. 3:

****) Նոյնը, կր. 6:

*****) Նոյնը, կր. 42:

ցեալ խնամակալութեան, — տաճկահայութիւնը «այժմ ներկայացնում է մի ամայի անապատ»:

100,000 մարդ է կոտորուել, 100,000 մարդ զաղթել արտասահման—Ռուսաստան և Ամերիկա, 40,000 հայ թիւրքացել է, սովից, սարսափից, հիւանդութիւններից, բանտի տանջանքներից հարիւր հազարաւոր մարդիկ են մահացել, երկրում թողնելով հարիւր հազարաւոր որբեր, այրիներ մերկ, քաղցած, յետին աղքատութեան հասած»*):

ԼԵ.

Բայց եւրոպական տէրութիւնների խնամակալութիւնը միմիայն տաճկահայութեանը այնչափ ու այսպիսի տառապանքների ենթարկելով չբաւականացաւ:

Այլ այդ խնամակալութեան հարւածներից մի մեծ բաժին ևս ռուսահայութեանը վիճակեցաւ շնորհիւ դաժան և հայատեաց իշխ. Գալիցիին:

Այսպէս օրինակի համար՝

1. Հայոց եկեղեցական ծխական դպրոցները փակւեցան (1896).

2. Բոլոր բարեգործական ընկերութիւնները փակւեցան (1899).

3. Հայերի հրատարակչական ընկերութիւնները փակւեցան (1899).

*) Տակահ. հարցի պատմ., կր. 45:

4. Հայ լրագիրները մասամբ փակւեցան, մասամբ խիստ ճնշման ենթարկւեցան.

5. Եկեղեցական կայքերն ու կալածանքները գրավւեցան (1903).

6. Բոլոր հոգևորական պաշտօնեաների ընտրութիւնն ու նշանակելը՝ նահանգապետների թոյլտուութեամբ լինելու հոկտ. 18-ին կանոններն հրատարակւեցաւ (1903).

7. «Արարատ» պաշտօնական ամսագիրը գրաքննիչին ենթարկւեցաւ (1897).

8. Պատկների լուծման իրաւունքը կաթողիկոսից առնւեցաւ և Սինօդին յանձնւեցաւ:

9. Սինօդի դիւանատունը՝ Սինօդից առնւելով, պրօկուրօրի իրաւասութեանը ենթարկւեցաւ.

10. Հայոց լեզւի և կրօնի դասերը կամ կրճատւեցան, կամ վերացան միջնակարգ դպրոցներում: Նոյնիսկ Լազարեան Ճեմարանը այդ վիճակին ենթարկւեցաւ.

11. Հայ կրօնի և լեզւի աւանդումը միջնակարգ դպրոցներում՝ անպարտադիր հրատարակւեցան: Կրօնն ուսերէն աւանդելու առաջարկներ եղան.

12. Նոր-Նախիջևանցիների տասնեակ տարիներից ի վեր յարուցած պարբերական միջնորդութիւնները քաղաքի հաշուով գիմնադիօն կամ ուսական դպրոց բանալու—միշտ մերժւեցաւ, որովհետեւ քաղաքը պահանջում էր, որ հայ կրօնն ու լեզուն՝ հայ լեզուով աւանդւի:

13. Երգումն ուսերէն կատարելու կարգադրութիւններ եղան:

14. Ինքնուրոյն բեմական գրածքների խաղալն արգելւեցաւ.

15. Հոգ չունեցող հայ զիւղացիներին հող տալն նրանց հաւատափութեան հետ կապւեցաւ: Օրթոդոքս եկեղեցու միսիօնէրական ընկերութիւններն՝ հրահանգութիւն ստացան՝ հայորսութեան նկատմամբ համարձակ քայլեր անելու, նոյնիսկ նահանգապետների աջակցութեամբ:

16. Պետական հիմնարկութիւններից՝ վտարւեցան հայ պաշտօնեաները: Իսկ նորից պաշտօն ստանձնել ցանկացողներին՝ խոստացւեց տալ ներքին Ռուսաստանում, Կովկասի և Ասորիկովկասի սահմաններից դուրս:

17. Սակաւահող հայ զիւղացիներին արգելւեցաւ սահմանակից արքունի ազատ հողերից օգտուելու՝ ըստ առաջնոյն:

18. Տաճկահայ փախստականներից շատերը՝ Ռուսաստանի խորքերը քշւեցան:

19. Սուխում և Սև ծովի ափն եղած 20,000 տաճկահայերին Սիբիր քշելու կարգադրութիւն եղաւ: Բայց Փոխարքայի օգնական Մալամայի և գիտնական ընկերութիւնների միջնորդութիւնները միայն ազատեց խեղճ Ժողովրդին այդ պատուհասից: Իսկ այդ միջնորդութեան հիմք ծառայեց այն հանգամանքը, որ յիշեալ վայրերի մեռած, անպէտք, ճահճային երկիրը՝ տաճկահայերը մշակելով և ծխախոտ ցանելով՝ գինը բարձրացրել էին:

Նախ քան տաճկահայերի մշակումը մի օրավար գետինը մէկ ուրբլի եկամուտ էր բերում: Մշակութիւնից յետոյ եկամուտը 20—30 ուրբլու հասաւ: Առաջ մէկ օրավարի գինը 20—30 ո. էր: Յետոյ 300—400 ուրբլու հասաւ:

20. Ռուսաց հպատակութիւն ընդունող տաճկահայերը՝ պետական բոլոր հարկերը տալով հանդերձ 20 տարի ժամանակաւ սեփականութիւն ունենալու իրաւունքից զրկւեցան:

21. Մի կողմից Վելիչկօ հրապարակախօսը «УДАВЪ» կեղծ անւան տակ իր պասկվիլ վէպն էր գրում հայերիս դէմ, իսկ միւս կողմից՝ «КАВКАЗЪ» պաշտօնական թերթը նոյն Վելիչկօյի խմբագրութեամբ՝ ամենաանբարեխիղճ արշաւանք էր սկսել հայերի դէմ, և վրացիներին էլ գրգռում էր:

22. Եւ երբ վրացիները մէջ յաջողութիւն չգտաւ իշխան Գալիցին կառավարչապետը՝ այնուհետեւ թուրք խաժամուժը գրգռեց մեր դէմ և յառաջ բերեց 1905 թ. այսպէս կոչւած «հայ-թուրքական» շարդերը:

23.

ԼՂ.

Ահաւասիկ, ընթերցող, այս է թէ տաճկահայերի և թէ ուստահայերի համար (Գալիցին-

եան ռէժիմի ժամանակ) ժթ. դարի վերջերում հայ աղատագրական շարժումների արտադրած արդիւնքը, որով և փակւում է հայկական հարցի վեցերորդ շրջանը:

Վ Ե Ր Զ



և անցնելով դուրս 446 թվականից հետո մեծ
 ճաղքառույթի փոխարենը մեծապատիվությամբ (ամ
 փոքր մասերով) և անհատական փողով, զգալից
 փոքրությամբ հանձնված

Այս փողով 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո

1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո

1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո

1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո
 1846 թվականից հետո 1846 թվականից հետո

ՀԵՂԻՆԱԿԻ ԵՐԿԱՍԻՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ



1. Ձէնիաթ—Ղէնիաթ
2. Գլխագին
3. Ապօրինի զաւակը
4. Գինեղև
5. Ռաֆֆի «Կայծերը»
6. Կացինը քարին կպաւ
7. Մտորումներ
8. Պատմական Քաղաճներ Ա. պրակ
9. " " Բ. "
10. " " Գ. "
11. " " Դ. "
12. " " Ե. "
13. " " Զ. "
14. " " Է. "
15. Իսրայէլ Օրին և իր քաղաքական ծրագիրը
16. Հայկական հարցի երկրորդ շրջանը
17. Հայկական հարցի երրորդ շրջանը
18. Հայկական հարցի չորրորդ շրջանը
19. Հայկական հարցի հինգերորդ շրջանը
20. Հայկական հարցի վեցերորդ շրջանը
21. Պատմութեան դասերը

ն
հ
ծ
ա
ւ
ն
ա
պ
Ս

40 է.
15 է.

ՀՀ Ազգային գրադարան



NL0418247

ՀՀ Ազգային գրադարան



NL0418246

ՀՀ Ազգային գրադարան



NL0418245

ՀՀ Ազգային գրադարան



NL0418244

ՀՀ Ազգային գրադարան



NL0418243

